Ազգ
Azg
5 ՆՈՅԵՄԲԵՐ 2013 ԵՐԵՔՇԱԲԹԻ 190(5273)
ISSN: 1829-1651

## Հայաստանում մի շարք դեղեր հանվել են շրջանառությունից

ՀՀ առողջապահության նախարարի հրամանով Հայաստանում դադարեցվել է մի շարք դեղագործական ընկերությունների արտադրած դեղերի շրջանառությունը: Ինչպես «Արմենպրես»-ին տեղեկացրին ՀՀ առողջապահության նախարարությունից, մասնավորապես, նախարարի՝ 2013 թվականի հոկտեմբերի 28-ի թիվ 2867-Ա հրամանով անվավեր է ճանաչվել Ռուսաստանի Դաշնության «Ակրիխին Ֆարմացեւտիկալս Քո.» ընկերության արտադրության «**Միկոզորալ** դեղահատեր 200մգ N30&raq uo»: Հնդկաստանի «Նաբրոս Ֆարմա ՊՎՏ., ՍՊ» ընկերության արտադրության «**Անտիգրիբոկ Նիզոմաքս** դեղահատեր 200մգ N10», Հայաստանի Հանրապետության «Արփիմեդ» սահմանափակ պատասխանատվության ընկերության «**Կետոկոնազոլ** դեղահատեր 200մգ (10)», Իտալիայի «Յանսեն-Սիլագ Ս.Պ.Ա., Ջոնսոն եւ Ջոնսոն ՍՊԸ, Ռուսաստան-ի համար» ընկերության արտադրության «**Նիզորալ** դեղահատեր 200մգ N10 եւ N30» դեղերի գրանցումը:

Նախարարի հանձնարարությամբ նշված դեղերի շրջանառությունը դադարեցվել է Հայաստանի Հանրապետությունում եւ սկսվել է հետկանչման գործընթացը: Որոշման համար հիմք են ծառայել միջազգային մասնագիտական աղբյուրներից (Եվրոպայի դեղգործակալություն եւ ԱՄՆ դեղերի եւ սննդի վարչություն) ստացված գրությունները, ինչպես նաեւ ՀՀ ԱՆ դեղաբանական խորհրդի արձանագրությունը, ՀՀ ԱՆ «Դեղերի եւ բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի եզրակացությունը եւ այն, որ կետոկոնազոլ պարունակող ներքին ընդունման դեղաձեւերի օգուտ/ռիսկ հարաբերակցությունը՝ լյարդաթունայնության դեպքերի հաճախացման եւ վտանգավորության աճի պատճառով գնահատվում է բացասական:

# Խաղաղության չարաշահումն ավելի վտանգավոր է պարտված ժողովրդի համար, քան նույնիսկ պատերազմը

ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահները կրկին տարածաշրջանում են ու այս անգամ եկել են Հայաստանի ու Ադրբեջանի նախագահների առաջիկա հանդիպման նախապատրաստման հույսով ու առաքելությամբ:

Ադրբեջանական «Ազերիպրես» գործակալության հաղորդմամբ՝ երեկ Բաքվում համանախագահներ Իգոր Պոպովը, Ջեյմս Ուորլիքն ու Ժակ Ֆորը հանդիպել են Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւի հետ, որից հետո ռուսաստանցի համանախագահն ասել է հայտարարություն, թե Ալիեւ կտտեր համաձայնություն է տվել «հայ գործընկերոջ հետ հանդիպման համար»:



Ընդ որում, հանդիպումը, ըստ նույն Իգոր Պոպովի, ծրագրվում է անցկացնել մինչեւ այս տարեվերջ: Ու եթե հաշվի առնենք, որ դեռ այս ընթացքում նոյեմբերի 28-29-ին էլ Վիլնյուսում Արեւելյան գործընկերության գագաթաժողովն է անցկացվելու, ապա Հայաստանի ու Ադրբեջանի նախագահների հանդիպում նախապատրաստելու համար իրականում մնում է դեկտեմբերը:

Նույն աղբյուրները տեղեկացնում են, որ հենց երեկ էլ համանախագահները մեկնել են Երեւան՝ նույն առաքելության շրջանակներում հանդիպում ունենալու Հայաստանի նախագահի հետ: Եվ քանի որ ցայսօր որեւէ պարագայում Հայաստանը չի հրաժարվել բանակցային գործընթացը շարունակելու առաջարկներից, ավելին, չի խոչընդոտել ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների աշխատանքներին, կարելի է վստահությամբ ասել, որ Սերժ Սարգսյանը եւս կտա հանդիպման համար իր համաձայնությունը:

Միեւնույն ժամանակ, թերեւս ելնելով տարածաշրջանային այս այցելության՝ Հայաստանի ու Ադրբեջանի նախագահների հանդիպում կազմակերպելու առաքելությունից, համանախագահները չեն ծրագրում այցելել Ստեփանակերտ:

Ամեն դեպքում, համանախագահները Երեւանում հանդիպումից հետո հայտարարություն են անելու, որում թերեւս տեղ չգտնի, ինչպես միշտ, որեւէ խոսք ու գնահատական այն մասին, որ Ադրբեջանի նախագահը մի կողմից համաձայնություն է տալիս բանակցությունները շարունակելու համար պատրաստվող հանդիպմանը, մյուս կողմից, հերթական անգամ, սահմանին կրակոցներ են հնչում, այն էլ գյուղական դպրոցի ուղղությամբ: Ու թեեւ, Հայաստանի պաշտպանության նախարարության համաձայն, տուժածներ չկան Բարեկամավան գյուղի դպրոցի ուղղությամբ արձակված կրակոցներից, ակնհայտ է, որ ադրբեջանական ոճը մնում է նույնը. տարածաշրջանային բարձրաստիճան, կարեւոր այցերը հարեւանները «պատվում են» սադրանքներով:

«Խաղաղության չարաշահումն ավելի վտանգավոր է պարտված ժողովրդի համար, քան նույնիսկ պատերազմը»: Այս խոսքերը Գարեգին Նժդեհինն են ու դժվար թե հասանելի լինեն Ալիեւին, սակայն որեւէ կերպ, ցանկալի է՝ համանախագահների մակարդակով, գոնե մեկ անգամ պետք է հասցվի ադրբեջանական առաջնորդի սուլթան դարձած որդուն, որ սադրանքները երբեք էլ արդյունք չեն տալու:

**Վ. Պ.**

## Գարեգին Բ-ն՝ Եկեղեցիների համաշխարհային խորհրդի նախագահ



Հարավային Կորեայի Բուսան քաղաքում անցկացվող Եկեղեցիների համաշխարհային խորհրդի 10-րդ համաժողովի նոյեմբերի 4-ի նիստին համաժողովի պատվիրակների միաձայն քվեարկությամբ Գարեգին Բ Ծայրագույն պատրիարք եւ Ամենայն հայոց կաթողիկոսը ընտրվեց Եկեղեցիների համաշխարային խորհրդի նախագահ առաջիկա ութ տարիների համար:

ԵՀԽ նախագահությունը բաղկացած է ութ անդամից: ԵՀԽ-ն խրախուսում է միջեկեղեցական (էկումենիկ) հարաբերությունները, աշխարհում հանդես գալիս որպես մարդու իրավունքների, արդարության եւ խաղաղության ջատագով:

## Հայաստանը դրսում համոզում է ԵՄ անդամ երկրներին, ներսում՝ ԵՄ դեսպաններին

Հայաստանի արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանը երեկ աշխատանքային ճաշ է ունեցել Երեւանում հավատարմագրված ԵՄ անդամ պետությունների դեսպանների եւ ԵՄ պատվիրակության ղեկավարի հետ:

ԱԳՆ պաշտոնական հաղորդագրության համաձայն, հանդիպմանը մտքերի փոխանակում է տեղի ունեցել Հայաստան-Եվրոպական միություն հարաբերությունների վերաբերյալ: Կողմերը քննարկել են Արեւելյան գործընկերության Վիլնյուսի գագաթաժողովին առնչվող հարցեր: Զրույցի ընթացքում անդրադարձ է կատարվել արցախյան հիմնախնդրի կարգավորման գործընթացի շարունակմանն ուղղված ջանքերին, միջազգային օրակարգի խնդիրների:

Վերջին շրջանում արտաքին գործերի գերատեսչության ղեկավարը զգալի ինտենսիվությամբ հանդիպումներ է ունենում Եվրոմիության անդամ երկրների տարբեր ներկայացուցիչների հետ արտերկրյա այցելությունների ժամանակ, իսկ այժմ էլ, փաստորեն, հնարավոր քայլերն ու արդեն իսկ համաձայնեցված իրավիճակը քննարկվում են Հայաստանում ԵՄ դեսպանների հետ:

**Վ. Պ.**

## «Վրացական երազանքը» իրականություն դարձավ

**ԵՐՎԱՆԴ ԱԶԱՏՅԱՆ**

Վրաստանում նախագահական ընտրությունները նշանակալի են ոչ միայն վրացիների, այլեւ Հայաստանի եւ տարածաշրջանի մյուս բնակիչների համար: «Վրացական երազանքը» քաղաքական կոալիցիա է, ի մի բերված վրացի միլիարդատեր Բիձինա Իվանիշվիլու ջանքերով՝ տապալելու նախագահ Սաակաշվիլու եւ նրա «Միացյալ ազգային շարժում» կուսակցության տասնամյա իշխանությունը:

Միխեիլ Սաակաշվիլին իշխանության ղեկն ստանձնեց «վարդերի հեղափոխության» շնորհիվ, որը քաղաքական ասպարեզից դուրս մղեց նախագահ Էդուարդ Շեւարդնաձեին եւ Վրաստանը դրեց քաղաքական նոր ուղու վրա: Դա մի ժամանակաշրջան էր, երբ քաղաքական ակտիվիստները, ֆինանսավորված եւ վերապատրաստված Սորոսի հիմնադրամի միջոցներով, սոցիալական եւ քաղաքական խոր փոփոխություններ հրահրեցին նախկին խորհրդային հանրապետություններում՝ նպատակ ունենալով ըստ հայտարարվածի ճանապարհ հարթել ժողովրդավարությանը, բայց իրականում՝ դեպի Արեւմուտք կողմնորոշմանը: Մեկ տարի անց Ուկրաինան «ժողովրդավարություն» ձեռք բերեց «նարնջագույն հեղափոխության» միջոցով:

Ամերիկայում վերապատրաստված Սաակաշվիլին իր երկիրը դրեց հաստատապես դեպի Արեւմուտք եւ ՆԱՏՕ ուղղորդելու ուղու վրա, այդ գործընթացում թշնամացնելով իր հյուսիսային հարեւանին՝ Ռուսաստանին այն աստիճան, որ 2008-ին պատերազմ ծագեց երկու երկրների միջեւ եւ Վրաստանը կորցրեց Աբխազիան եւ Հարավային Օսիան:

Իշխանության տասնամյակի արդյունքները միանշանակ չէին: Տնտեսությունը զարգացավ, օրինականությունը հաստատվեց, կաշառակերությունը մասամբ վերացավ: Բայց երկրին ժողովրդավարություն պարգեւած արշավն իր հետ բերեց նաեւ բռնությունների, կալանքի եւ կտտանքների մի նոր ալիք, ինչպես նաեւ այս անգամ արդեն նոր վարչակազմի կողմից կաշառակերության նոր դրսեւորումներ: Ընտրարշավի ժամանակ Իվանիշվիլին նշեց, որ թեեւ հարկերի հավաքման մեխանիզմներն ավելի ներգործուն էին դարձել, բայց ավելացել էին հարկերի անօրինական յուրացման դեպքերը:

Սաակաշվիլիի իշխանության օրոք Վրաստանի կառավարության հարաբերությունները Հայաստանի հետ առնվազն բարեկամական չէին, եթե չօգտագործենք ավելի դիպուկ «թշնամական էին» արտահայտությունը: Վրաստանը ՄԱԿ-ում միշտ էլ քվեարկում էր Հայաստանի դեմ եւ Ադրբեջանի օգտին, հակառակ որ Հայաստանն ու Վրաստանը միակ քրիստոնյա երկրներն են իսլամական երկրների «օվկիանոսում»: Սաակաշվիլու վերջին «ժեստը» անցյալ սեպտեմբերին ՄԱԿ-ում արտասանած իր ելույթն էր, որի ընթացքում տհաճ ակնարկներ կատարեց Հայաստանի հասցեին, վերջինիս Մաքսային միությանը անդամակցելու որոշման առնչությամբ:

*Տես էջ 8*

Ընթացիկ

# Արտագաղթ. նաեւ՝ երկիրն անլիարժեք ներկայացնելով

Օր չի լինի, որ հայաստանյան շարքային պաշտոնյայից մինչեւ նախարար չհայտարարեն Հայաստանի փոքր երկիր լինելու մասին: Հենց վերջերս գյուղնախարարության կազմակերպած մի քննարկման մասնակից հայտարարեց, թե Հայաստանը փոքր լինելու պատճառով երբեք հացահատիկով ինքնաբավ լինել չի կարող, իսկ նախարարներից մեկն էլ կոչ արեց մեր փոքրությունը փոխհատուցել համաշխարհային նշանակության իր ոլորտի գործընթացներով: ՀՀ շարքային քաղաքացիս գտնում է, որ հանրային գործիչների այսօրինակ գնահատականները Հայաստան երկրի արժեւորմանը չնպաստող մոտեցումներ են եւ առանց այն էլ դժվարին վիճակում գտնվող մեր հայրենակիցների մեջ հուսալքման տրամադրություններ են առաջացնում, որոնցից է նաեւ ազգային անվտանգության խնդիր դարձած արտագաղթը: Հանրության պաշտոնական հատվածի ներկայացուցիչների կողմից շրջանառության մեջ դրվող նման գնահատականներն ունկնդրելով, հարյուրհազարավոր թե միլիոնավոր հայեր ապաստանում են այլ երկրներում, հույս տածելով այդկերպ ինչ-որ չափով նպաստել երկրում մնացողների բարեկեցության բարձրացմանը, որը տարեցտարի ցավալիորեն չեն տեսնում: Ի վերջո ո՞րն է պաշտոնյաներից ակնկալելի հայաստանաբնակների այն թվաքանակը, որի պարագայում կարելի է մեզ անոթալի աղքատությունից այլ նիշ ապահովել. 1,5-1 մլն-ը, 800-600 հազա՞րը...

Ինչո՞ւ ենք այսչափ անփույթ մեր ունեցածի հանդեպ, երբ այն երբեմն թե հաճախ նաեւ դրախտավայր ենք որակում: Ինչո՞վ են առաջնորդվում նրանք, որոնք բարձրաձայնում են Հայաստանի փոքր լինելը, երկրի պարենապահովվածությունը խնդիր հռչակելը, երկիրը քարաստան անվանելը, հողերի ահագնացող աղակալումը, տարերային աղետների գոտի լինելը... Այդ, այսպես կոչված իրավունքն ունենալու համար հարկավոր է լիարժեք փաստարկներ նշել, հիմնավորումներ տալ, ապացույցներ բերել: Եթե այստեղ նկատի է առնվում բուն տարածքը, ապա նույնքան է, ասենք Բելգիան, ուր 10 մլն-ից ավելի բնակչություն է ապրում. ապրելն այստեղ շատ համեստ գնահատական է: Վերջին տարիներին Բելգիայում ապաստան են գտել տողերիս հեղինակի մեկ տասնյակ ընկեր-ծանոթները, որոնք նույնպես պարբերաբար այցելության են գալիս... Հայաստան:

Բելգիայի հարեւան Դանիան էլ տարածքով մեծ չէ, ՀՀ-ի հազիվ 1,5 չափը, բնակչությունն էլ՝ կրկնակին: Բայց դանիացի գյուղատնտեսներին չգիտես ինչ կախարդական փայտիկի օգնությամբ հաջողվում է իրենց իրոք փոքր հողատարածքում յուրաքանչյուր տարի 5 մլն տոննա ցորեն աճեցնել: Նշենք, որ ահռելի այս քանակը նրանք խոհանոցներում չէ, որ սպառում են, այլ օգտագործում են անասնապահությունում, որպես լիարժեք անասնակերի հիմնական բաղադրիչ: Տարածքով փոքր այս երկիրը լիովին բավարարում է իր մարդկանց հիմնական սնունդ կաթնամսամթերքի պահանջը, իսկ ավելցուկն արտահանելով մրցակցում է այնպիսի հսկաների հետ, որպիսիք են ԱՄՆ-ն ու Գերմանիան, Ֆրանսիան ու Ավստրալիան: Դե փորձեք Դանիան փոքր երկիր որակել, ինչ է թե այնքան տարածք ունի, որքան է հիմա հայերիս տրամադրության տակ գտնվողը: Երկրի 1 բնակչի հաշվով տարեկան ՀՆԱ-ն մոտ 40 հազար դոլար է, մերը՝ հազիվ 3 հազար դոլար:

Գրեթե նույն խոսքերը կարող ենք ասել մեր տարածքի հազիվ կեսն ունեցող Իսրայելի մասին, որի բնակիչներից եւ ոչ մեկի մտքով չի անցնի երկիրը փոքր պետություն հռչակել: Բարձր կենսամակարդակ ունեցող այս երկրի բնակիչներին կարելի է աշխարհի 4 կողմերում տեսնել, նրանց արտադրանքն ամենուր է, սկսած ՌԴ արտահանվող ստեպղինից մինչեւ գերժամանակակից խաղաղ ու ռազմական տեխնիկան: Մերոնք առայժմ նախընտրում են աշխարհին ներկայանալ ծխախոտի ու ոգելից խմիչքների տեսականիներով:

Ուրեմն ինչո՞ւ չառաջնորդվել հիշատակված ու այդօրինակ մի շարք այլ երկրների օրինակով, ուր բնական գործընթաց է ունեցածի արժեւորումն ու օգտագործումը, արդյունավետ աշխատանքի իրագործումը, առավելագույն խնայողության արմատավորումը, մարդ-արարածին հատուկ այլ գործընթացների ծավալումը: Գյուղոլորտի մասնագետն ինչո՞ւ չի բարձրաձայնում, որ չգիտես ում ապաշնորհության պատճառով հայաստանյան բարեբեր հողերում ցորենի միջին բերքատվությունը հազիվ 2 տոննա է, երբ շատ առավել անբարենպաստ բնակլիմայական երկրներում 7-8 տոննա է: Ինչո՞ւ չի տագնապ հնչեցվում, որ մեր կովերի միջին կաթնատվությունը տարեկան ընդամենը 2 տոննա է, երբ աշխարհի տասնյակ երկրներում այս ցուցանիշը 10-12 տոննա է: Բարձրագույն պաշտոնյան ինչու չի ահազանգում, որ հայերիս հողը առվույտ ու կորնգան աճեցնելու համար չէ, երբ առավել հավելյալ արժեք ապահովող մշակաբույսեր կան, աշխարհը նաեւ դրանցով է իր մարդկանց մարդկային պայմանները երաշխավորում, բարեկեցություն ապահովում: Սրանք այն նվազագույն ու տարրական գործընթացներն են, որոնց պարագայում չեն հիշվում երկրի ոչ տարածքային, ոչ մարդկալին գործոնները, պայմաններ են ստեղծվում լիարժեք աշխատելու, գործելու զարմանք առաջացնող հեռահաղորդակցությունից մինչեւ կենսաէներգիայի ուղղություններում:

Արտերկրներում հայտնված մեզնից յուրաքանչյուրի տասնյակ ծանոթ-բարեկամները մշտապես են փաստում, որ Հայաստանից հեռանալը պայմանավորված է նաեւ Հայաստանի կարողունակության հանդեպ մտահոգությամբ. չենք կարողանում անգամ 2 մլն մարդկանց սննդի նվազագույն պահանջները բավարարել, ուրեմն թող յուրաքանչյուրն իր գլխի ճարը տեսնի, մեկնեք՝ ուր կարող եք, ուր ցանկանում եք, ուր կանչում են:

Փաստ է, չէ՞, որ մարդ-արարածի մեր տեսակին ամենուր նաեւ սիրով ու բարյացակամ են ընդունում, հարգում ու պատվում, աշխատանք ու դիրք առաջարկում, հասարակական ու պետական պաշտոնների նշանակում: Անհնար է չտեսնել ու չզգալ այն ջերմ վերաբերմունքը, որ տասնյակ երկրների մարդիկ ցուցաբերում են իրենց մոտ հանգրվան գտած մեր հայրենակիցների հանդեպ, ընդգծելով նրանց աշխատասիրությունն ու ազնվությունը, հանձնարարության հանդեպ բարեխղճությունն ու պատրաստակամությունը, աշխատանքի նկատմամբ սրտացավությունը: Եվ հարցը, թե ինչու՞ է դրանց դրսեւորումն անհնարին դառնում մեր պայմաններում, մեր առօրյայում ու շրջապատում, հայաստանյան միջավայրում, հնչում է ինքնաբերաբար: ՀՀ շարքային քաղաքացիս գտնում է, որ այստեղ որոշիչ է նաեւ մեզանում արմատավորված Հայաստանն անլիարժեք ներկայացնելու հանրային որոշ շրջանակների մեջ արմատավորված մտայնությունը:

**Հ.Գ.-** *Մինչ մտորումներս թղթին հանձնելն ավարտելը հարեւաններիցս մեկը տեղեկացրեց, որ բնակարանը վաճառել ու ՌԴ-ում վերջին տարիներին ընտանիքներով հաստատված զույգ տղաների մոտ է մեկնել մոտակա բարձրահարկի մեր հերթական հարեւանը:*

ԳԵՂԱՄ ՔՅՈՒՐՈՒՄՅԱՆ

ՄԻՋԱԴԵՊ

# Փախած զինվորները հոգեբուժականում են

**Նոյեմբերի 2-ին «Կանազի» կայազորային կլինիկական հոսպիտալից փախուստի դիմած 4 զինծառայողները հայտնաբերվել են: Նրանց առանձնացրել են, առայժմ նրանց նկատմամբ քրեական պատասխանատվություն չի կիրառվի՝ հաշվի առնելով, որ նրանք հոգեբուժական բաժանմունքից են: Պաշտպանության նախարարության տեղեկացմամբ՝ զինծառայողներին հայտնաբերելու գործում մեծ աջակցություն են ցուցաբերել նաեւ զինվորների ծնողներն ու անմիջապես արձագանքել: Այժմ զինծառայողները հոսպիտալի հոգեբուժական բաժանմունքում են եւ բուժման կուրս են անցնում:**

**Շաբաթ օրը երեկոյան կայազորային կլինիկական հոսպիտալում երկու զինվորներ, որոնք գտնվել են ստացիոնար բուժման մեջ, վիճաբանություն էին սկսել նույն բաժանմունքի զինվորների հետ, որը հետո վերաճել էր ծեծկռտուքի: ՊՆ մամուլի խոսնակ Արծրուն Հովհաննիսյանի փոխանցմամբ՝ զինվորները հարձակվել են նաեւ հերթապահ բժշկի վրա, այնուհետեւ դիմել փախուստի: «ՀՀ ՊՆ ՌՈ աշխատակիցները եւ ՊՆ համապատասխան պաշտոնյաները տեղում իրականացրել են համապատասխան աշխատանքներ», ասել էր Հովհաննիսյանը:**

**Մինչ պաշտպանության նախարարության տարածած հաղորդագրությունը դեպքի մասին հասարակությունն իմացել է լրագրող Մհեր Ղալեչյանից, ով ֆեյսբուքի իր էջում գրել էր, որ հոսպիտալի մոտ աննորմալ դեպքեր են կատարվում: Եվ հղում անելով բնակիչների տեսածին՝ գրել էր, որ հոսպիտալից 5 զինվոր են դուրս եկել՝ ծեծված, ջարդված ու սկսել են օգնություն կանչել, պատահական մեքենաներ են կանգնեցրել, թե մեզ այստեղից փախցրեք, մեզ սպանում են: «Պատմում են, որ այդ զինվորներից երկուսը 41 համարի երթուղային են նստել, թե կտրաքացնենք, հենց հիմա մեզ տարեք այստեղից: Մի պատահական անցորդ տաքսի է կանգնեցրել, զինվորներից մեկին նստեցրել է տաքսի, փողը տվել վարորդին ու ասել, որ զինվորին տանի այնտեղ, որտեղ նա կասի», գրել էր լրագրողը:**

**Դրան ի պատասխան՝ Արծրուն Հովհաննիսյանը գրել էր, որ իրավիճակը վերահսկվում է, ու կարիք չկա սուտ տեղեկություններ տարածելու:** Հ. Հ.

# Էկո-կրթական կենտրոն Ուրծաձորում

**Արարատի մարզի Ուրծաձոր համայնքում պաշտոնապես բացվել է էկո-կրթական նորակառույց կենտրոնը: Այն կառուցվել է Վայրի բնության եւ մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի կողմից՝ ՄԱԶԾ-Գլոբալ էկոլոգիական հիմնադրամի փոքր դրամաշնորհների ծրագրի ֆինանսական աջակցությամբ:**

**Կենտրոնի նպատակը համայնքի բնակիչների շրջանում կենսառեսուրսների կայուն օգտագործման կարողությունները խրախուսելն ու եկամուտ ապահովելն է՝ առանց շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության:**

**Էկո-կրթական կենտրոնը գտնվում է «Կովկասյան կենսաբազմազանության ապաստարանում», որը բուֆերային գոտի է հանդիսանում «Խոսրովի անտառ» պետական արգելոցի համար: Լինելով հարավկովկասյան տարածաշրջանի առաջին պահպանվող տարածքը, «Կովկասյան կենսաբազմազանության ապաստարանը» կառավարվում է մասնավոր (ոչ պետական) կազմակերպության՝ ՎԲՄԱՊՀ-ի կողմից: Նախագիծն իրականացվում է բրիտանական Համաշխարհային հողայի միավորում (World Land Trust) կազմակերպության, ԲՊՄՄ-ի Նիդեռլանդների ազգային կոմիտեի (IUCN NL) եւ ՎիվաՍել-ՄՏՍ ընկերության աջակցությամբ:**

**Բնապահպանական ուսուցման կենտրոն լինելուց բացի, Ուրծաձորի նորակառույց կենտրոնը «կանաչ» շինության մոդել է: Դրա կառուցման համար կիրառվել են շրջակա միջավայրի համար անվնաս տեխնոլոգիաներ: Մասնավորապես՝կենտրոնի տաք ջրի մատակարարումն իրականացվում է արեւային մարտկոցների միջոցով, քամու, արեւային էներգիայի, մասամբ էլ հիդրոկայանի շնորհիվ՝ կատարվում է էլեկտրաէներգիայի խնայողություն: Շրջակա միջավայրը կոյուղաջրերից պաշտպանելու համար շինությունը համալրվել է կեղտաջրերի զտման սարքով:**



**Կարեւոր համարելով բնապահպանական ծրագրերի իրականացումը, ՎիվաՍել-ՄՏՍ-ն աջակցում է Վայրի բնության եւ մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի գործունեությանը: Կենտրոնի բացմանը հաջորդել է խորհրդանշական ծառատունկը:**

**Ուրծաձորի էկո-կրթական կենտրոնը համայնքի եւ հարակից բնակավայրերի բնակիչներին, դպրոցականներին եւ ուսանողներին հնարավորություն կտա մասնակցելու դասընթացների եւ սեմինարների: Ավելին, այն կդառնա նաեւ գիտական հետազոտությունների կազմակերպման եւ եւ էկո-տուրիզմի զարգացման վայր՝ նպաստելով համայնքի զարգացմանը:**

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԻԲ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
e-mail: azg@azg.am, azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ հեռ. 060 271117
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ հեռ. 060 271113
Հաշվապահութիւն (գովազդ) հեռ. 582960, 060 271112
Լրագրողների սենեակ հեռ. 581841, 060 271118
Համակարգչ. ծառայութիւն հեռ. 060 271115
***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն***
հեռ 060 271114, 010 529353
Համակարգչային շարուածքը՝ «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատւութիւն չի կրում:

# Մերսի, Օրանժ

*«Օրանժ Արմենիան» չորս տարեկան է*

Իր յուրաքանչյուր բաժանորդի ծննդյան օրը «Օրանժ Արմենիա»-ն զանգահարում է նրան եւ, շնորհավորելով տոնի կապակցությամբ, տրամադրում անվճար խոսելաժամանակ: Դժվար է ասել` կզանգահարե՞ն արդյոք այսօր ընկերության 620 հազար բաժանորդները «Օրանժ Արմենիա»` շնորհավորելու վերջինիս չորրորդ տարեդարձը մեր երկրում...

Այսօր լրանում է «Օրանժ Արմենիա»-ի Հայաստանում գործունեության չորս տարին: Այդ առթիվ ընկերությունը երեկ ամփոփեց անցնող տարվա իր ձեռքբերումները, ինչպես նաեւ ներկայացրեց եկող ամիսների համար ընկերության ռազմավարությունը:

Խոսելով անցնող տարում «Օրանժ Արմենիա»-ի ձեռքբերումներից` ընկերության գլխավոր տնօրեն **Ֆրանսիս Ժելիբտերը**, ընդգծելով, որ «չորս տարին շատ մեծ ժամանակահատված չէ, սակայն, չնայած դժվարություններին, մեզ հաջողվել է շատ բան անել», եւ որ «մանկական տարիքում «Օրանժ Արմենիան», իհարկե, կատարյալ եւ օրինակելի չի եղել», առանձնացրեց այն երեք հիմնական ուղղությունները, որոնցում ընկերությունն արձանագրել է հիմնավոր հաջողություններ: «Որպես առաջին ուղղություն նշեմ, որ Օրանժն արդեն դարձել է անսահմանափակ օգտագործման միտումների առաջամարտիկը, իսկ այս տարի էլ մենք ներկայացրինք բջջային ինտերնետի անսահմանափակ օգտագործման հնարավորություններ կանխավճարային ծառայությունների բաժանորդների համար, ինչպես նաեւ ցանցի ներսում բոլոր զանգերը Դելֆին, Թիթեռ եւ Պանտերա բաժանորդների համար դարձրեց անսահմանափակ»: Երկրորդ ուղղությունը, որտեղ ընկերությունն արձանագրել է հաջողություններ, ինտերնետի ոլորտն է. «Այս ոլորտում Օրանժը ստեղծեց Ինտերնետ-սրճարան կանխավճարային առաջարկը մարզերի բնակիչների համար», ասաց Ժելիբտերը: Օրանժի տնօրենը անդրադարձավ նաեւ «Օրանժ մերսի» ծրագրին, որը երկու նպատակ ունի` պարգեւատրել մի կողմից պարզապես Օրանժի բաժանորդ լինելու համար, մյուս կողմից էլ ծառայություններից հաճախ օգտվելու համար: Օրանժը ստեղծել է նաեւ նաեւ մի ծրագիր, որի նպատակն է ամսական բաժանորդագրություններից օգտվող հավատարիմ բաժանորդներին հնարավորություն տալ, բաժանորդագրությունը մեկ-երկու տարով երկարաձգելու պարագայում, ձեռք բերելու հեռախոս ավելի ցածր գներով: «Երրորդ ուղղությունը հաջողությունների մեր աշխատանքի որակի բարելավումն է: Այն պահպանելու եւ կատարելագործելու նպատակով Օրանժը շարունակաբար կատարել է ներդրումներ, եւ երկու անգամ արտացոլվել է P3 միջազգային անկախ խորհրդատվական ընկերության կողմից տարբեր վայրերում իրականացրած ուսումնասիրությունների արդյունքում, ըստ որոնց Օրանժի ցանցը ճանաչվել է Հայաստանի շարժական ինտերնետի առաջատարը: Ընկերությունն ընդլայնել է իր ինտերնետի արագության հնարավորությունների ցանցը, եւ այժմ Օրանժ ինտերնետը հասանելի է մի շարք նոր քաղաքներում` Էջմիածնում, Արարատում, այլուր», ասաց Ֆրանսիս Ժելիբտերը:

Հասկանալի է նաեւ «Օրանժ Արմենիա»-ի գործունեությունը հովանավորության, բարեգործության եւ կորպորատիվ սոցիալական պատասխանատվության ոլորտում: Օրանժ հիմնադրամի միջոցներով, «Լույս` հայ աչքերին» խորագրի շրջանակներում մեկ տարում շուրջ տասնինը հազար մարդ ստացել է անվճար ակնային հետազոտություն, իսկ 1200-ը` անվճար վիրահատություն: Մեկ այլ ծրագրով, սոցիալական ծանրագույն պայմաններից դրդված` պետական հաստատությունների հոգածությանը հանձնված տասնյոթ երեխա վերադարձել է ընտանիք: Այս ծրագիրը գոյանում է Օրանժ հիմնադրամի «հաղորդագրություն-բարեգործություն» նախաձեռնության արդյունքում: Օրանժի բաժանորդները ուղարկում են 100-500 դրամի հաղորդագրություններ, եւ ընկերությունը կրկնապատկելով գոյացած գումարը` այն ուղղում է հիշյալ ծրագրին: Օրանժ հիմնադրամը սկսել է աջակցել նաեւ գյուղական տնտեսությունների վերածննդին. գյուղերից մեկում արդեն ներդրվել է նոր կորպորատիվ մոդել, որի նպատակն է բնակիչներին հնարավորություն տալ միավորելու ջանքերն ու գիտելիքները եւ ավելի լավ արդյունքներ ստանալ:

«Օրանժ Արմենիան» ներկայացված է նաեւ մշակույթի ոլորտում: Ինչպես նշում է ընկերության գլխավոր տնօրեն Ֆրանսիս Ժելիբտերը` «մենք մեր համեստ ներդրումն ունենք Հայաստանի մեծ մշակույթի զարգացման գործում»: Մասնավորաբար շարունակվում է «Օրանժ Գրքի մրցանակ» ծրագիրը, որին մասնակցում են երիտասարդ հայ գրողներ, ինչպես նաեւ «Հայակ» ազգային կինոյի մրցանակաբաշխությունը:

Անցնող տարին ընկերության համար նշանակալից էր նաեւ ֆինանսական առումով: «Օրանժ Արմենիան» գրանցել է եկամուտների տասնյոթ տոկոսի աճ, որը գրեթե երեք անգամ գերազանցում է շուկայում գրանցված աճի միջին ցուցանիշին:

Պակաս ուշագրավ չեն «Օրանժ Արմենիա»-ի առաջարկած նոր նախաձեռնությունները: Հենց վաղվանից ընկերությունն անցնում է ներկայումս գործող վեց սակագնային պլաններից` երեքի` Օրանժ Բարեւ, Սուպեր Պարզ եւ Օրանժ Մեկ: Ընկերության մարկետինգի տնօրեն Արամ Մկրտչյանի խոսքերով` նոր սակագնային պլանների անցնելը չի նշանակում, որ նախկին պլանները դադարելու են գործելուց: Պարզապես Օրանժին նոր բաժանորդագրվողները կարող են ձեռք բերել արդեն բացառապես այս երեք պլաններից մեկը, իսկ հին օգտատերերը կարող են իրենց սակագնային պլանը, ցանկության դեպքում, փոխարինել նորով: Օրանժ Բարեւ սակագնային պլանի բաժանորդները հնարավորություն կստանան զանգելու Օրանժի բոլոր համարներին հինգ դրամ/րոպե կանխավճարով եւ ստանալու անվճար միջազգային րոպեներ պարզապես արտերկրում գտնվող ընկերներից եւ բարեկամներից ստացված զանգերի դիմաց: Նրանք կարող են նաեւ ակտիվացնել անսահմանափակ ներցանցային րոպեներ, մեգաբայթերի եւ հաղորդագրությունների փաթեթներ, ինչպես նաեւ յուրաքանչյուր անգամ հաշիվ վերալիցքավորելիս` ստանալ Օրանժ մերսիի միավորներ:

Սուպեր Պարզ սակագնային պլանը բոլոր նրանց համար է, ովքեր նախընտրում են պարզությունը եւ ունեն ընկերներ ինչպես Օրանժի, այնպես էլ Հայաստանի եւ Արցախի այլ օպերատորների ցանցերում: Այս պլանն ընտրողները կօգտվեն ցանցի ներսում եւ ցանցից դուրս զանգերի համար միեւնույն սակագնից` 15 դրամ/րոպե, հաշիվը առնվազն հինգ հարյուր դրամով վերալիցքավորելու դեպքում: Եվ վերջապես այն բաժանորդները, ովքեր հիմնականում զանգեր են կատարում Օրանժի ցանցում կամ հաճախ են օգտվում ինտերնետից, իրենց համար լավագույն լուծումը կգտնեն Օրանժ մեկ սակագնային պլանն ընտրելով: Այդ պարագայում նրանք կկարողանան մեկ դրամ սակագնով ցանցի ներսում զանգեր կատարել, հաղորդագրություններ ուղարկել, ինչպես նաեւ այցելել սոցիալական կայքեր, հաշիվն առնվազն հինգ հարյուր դրամով վերալիցքավորելու պարագայում:




Եվ վերջին հետաքրքրական առաջարկություն-նորամուծությունը «Օրանժ Արմենիա»-ից: Երեկ ընկերությունը ներկայացրեց իր նորարարական բջջային հավելվածը` «Իմ Օրանժը»` Adroid եւ IOS օպերացիոն համակարգերի համար, այն առաջինն է հայկական շուկայում: Առաջարկը արդեն այսօրվանից հասանելի կլինի Google Play Store-ում, իսկ նոյեմբերի քսանից նաեւ AppStore-ում: Այն անվճար է եւ դրա միջոցով բաժանորդները կարող են ստուգել իրենց հաշվեկշիռը, վերալիցքավորել այն, ստուգել կուտակած Օրանժ Մերսի միավորները, փոխարինել դրանք րոպեներով, հաղորդագրությունների կամ մեգաբայթերի փաթեթներով, գնել միջազգային րոպեների փաթեթներ, ակտիվացնել կամ ապաակտիվացնել ռոումինգը եւ այլն: «Իմ Օրանժ» բջջային հավելվածը նաեւ հնարավորություններ է տալիս օգտվելու ժամանցային ծառայություններից, դիտելու հեռուստատեսություն (ինչպես հայկական բոլոր, այնպես էլ արտասահմանյան առաջատար հեռուստաալիքները), օգտվել Օրանժ Կինոյի ծառայություններից, քարտեզով փնտրել եւ գտնել Օրանժի ամենամոտ խանութը եւ այլն:

Արամ Մկրտչյանը տեղեկացրեց նաեւ, որ իրենք առաջատարն են երկրում սմարթֆոնների վաճառքով: Ամսական շուրջ 1500-2000 սմարթֆոններ Հայաստանում վաճառվում են միայն «Օրանժ Արմենիա»-ի խանութներում, դա ընկերության վաճառած հեռախոսների մեկ երրորդն է կազմում:

Ֆրանսիս Ժելիբտերը երեկ գիշերը մեկնեց Փարիզ, նա արդեն երեկվանից ստանում է շնորհավորանքներ իր գլխավորած ընկերության` Հայաստանում չորսամյա գործունեության համար:

Շնորհավորում ենք եւ մենք... Մերսի, Օրանժ:

Հ. ԱՓՅԱՆ

**ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

## ԱՊՊԱ ոլորտում փոփոխություններ

**Ինչպես տեղեկացանք Հայաստանի ավտոապահովագրողների բյուրոյից, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից 2013-ի հոկտեմբերի 29-ին գրանցվել են բյուրոյի խորհրդի կողմից հաստատված «ԱՊՊԱ ոլորտում ապահովագրական պատահարի հետեւանքով տուժողի առողջությանը պատճառված վնասների գծով բժշկի ցուցումով բուժման շարունակականության (ամբուլատոր-ռեաբիլիտացիոն բուժման) ապահովմանն ուղղված միջոցառումների հետ կապված եւ այլ ծախսերի հատուցման ենթակա սահմանաչափերը եւ այդ ծախսերի անհրաժեշտության, հիմնավորվածության եւ փաստացի ապացուցվածության չափանիշների» կանոնների փոփոխությունները եւ լրացումները: Համաձայն դրանց, կոտրվածքները բաժանվել են երկու խմբի` 1. ողնաշարի, ազդրոսկրի, մեծ ոլոքի կոտրվածքներ, կոնքազդրային հոդի եւ ծնկահոդի ներհոդային կոտրվածքներ (ամբուլատոր-ռեաբիլիտացիոն բուժման առավելագույն ժամկետը` 6 ամիս), 2. այլ կոտրվածքներ (ամբուլատոր-ռեաբիլիտացիոն բուժման առավելագույն ժամկետը` 4 ամիս):**

**Ավելացվել է այրվածքների խումբը` այրվածքներ առանց սպիացման եւ ֆունկցիայի խանգարման (ամբուլատոր-ռեաբիլիտացիոն բուժման առավելագույն ժամկետը` 2 ամիս) եւ այլ այրվածքներ (ամբուլատոր-ռեաբիլիտացիոն բուժման առավելագույն ժամկետը` 12 ամիս):**

**Տեղեկացվում է, որ կանոններում կատարված փոփոխությունները եւ լրացումներն ուժի մեջ են մտնելու 2013-ի նոյեմբերի 11-ին:**

Ա. Մ.

## «Յուքոմը»` բջջային կապի 4-րդ օպերատոր

**Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը երեկ որոշեց «Յուքոմ» ընկերությանը Հայաստանի Հանրապետության տարածքում հանրային շարժական կապի ծառայությունների մատուցման համար թույլտվություն տրամադրել մինչեւ 2018-ի օգոստոսի 6-ը գործողության ժամկետով: Այսինքն, բացի շուկայում գործող բջջային կապի 3 օպերատորներից («Վիվասել-ՄՏՍ», «Օրանժ Արմենիա» եւ «Արմենտել»), կսկսի գործել նաեւ 4-րդ օպերատորը:**

**Հանձնաժողովի որոշման վերաբերյալ գործող բջջային կապի օպերատորներից «Օրանժ Արմենիայի» գլխավոր տնօրեն Ֆրանսիս Ժելբիտերը լրագրողներին ասել է, որ նոր օպերատորի մուտքը շուկա թույլ տալ իշխանությունների իրավունքն է, բայց դա որոշ առումներով անհասկանալի է: 4-րդ օպերատորը գործելու է 4G ցանցով, որին համապատասխանում են թանկարժեք հեռախոսները, ինչը որոշ առումով ռիսկային է:**

**«Արմենտելի» մամուլի քարտուղար Անուշ Բեղլոյանը, ի պատասխան մեր հարցման, 4-րդ օպերատորի մուտքը Հայաստանի «գերհագեցած բջջային կապի շուկա» անսպասելի համարեց: Նա միաժամանակ նշեց, որ «Արմենտելը» հետաքրքրությամբ կսպասի 4-րդ օպերատորի հետագա քայլերին:**

**Ամենայն հավանականությամբ, սպասողական դիրքորոշում է որդեգրել նաեւ հեռահաղորդակցության ոլորտի առաջատար ընկերություն «Վիվասել-ՄՏՍ»-ն, քանի որ երեկ որեւէ մեկնաբանությամբ նա հանդես չեկավ:**

Ա. Մ.

ԱԶԳ

Երախտավորը

# Տաղանդավոր, վաստակաշատ գիտնականը

Լրացավ տաղանդավոր եւ վաստակաշատ գիտնական, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, Հայաստանի գիտության վաստակավոր գործիչ Արմենակ Գեւորգի Նազարովի ծննդյան 105 եւ մահվան 30 տարին:

Ա. Գ. Նազարովը ծնվել է 1908թ. Փարիզում, 1911-ին տեղափոխվել է Երեւան, այնուհետեւ՝ Թբիլիսի: 1932-ին ավարտել է Թբիլիսիի Ինդուստրիալ ինստիտուտը: Ավարտելուց հետո աշխատանքի է անցել Վրաստանի կառուցվածքների գիտահետազոտական ինստիտուտում: Հինգ տարի անց, այդ ինստիտուտում շինարարական մեխանիկայի եւ սեյսմակայուն շինարարության բնագավառում կատարած հիմնարար աշխատանքների համար, առանց դիսերտացիայի պաշտպանության, նրան շնորհվել են տեխնիկական գիտությունների թեկնածուի աստիճան եւ պրոֆեսորի կոչում:



1945-ին «Սեյսմակայունության գործիքային տեսության կառուցման փորձ» թեմայով պաշտպանել է դոկտորական դիսերտացիա: 1946-ին Թբիլիսիից տեղափոխվել է Երեւան եւ անցել աշխատանքի շինանյութերի եւ կառուցվածքների հայկական գիտահետազոտական ինստիտուտում որպես փոխտնօրեն, այնուհետեւ՝ տնօրեն: Շատ կարճ ժամանակում իր գիտական աշխատանքներով Նազարովը հայտնի դարձավ նախկին ԽՍՀՄ-ում: Դրա վառ վկայությունն այն է, որ Ստալինի հրամանով նա ընդգրկվեց Աշխաբադում 1948 թվին տեղի ունեցած երկրաշարժի հետեւանքները ուսումնասիրող հանձնաժողովի կազմում:

1945-ին Ա. Գ. Նազարովն ընտրվում է ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամ, իսկ 1960-ին ՝ ակադեմիկոս: 1958-ին նրան շնորհվում է ՀԽՍՀ գիտության եւ տեխնիկայի վաստակավոր գործչի կոչում: 1961-ին Ա.Գ. Նազարովն ընտրվում է ԽՍՀՄ Գիտությունների ակադեմիային կից սեյսմաբանության եւ սեյսմակայուն շինարարության միջգերատեսչական խորհրդի բյուրոյի անդամ: Նրան է հանձնարարվում կազմել սեյսմակայուն կառուցվածքների հարցերով զբաղվող ԽՍՀՄ բոլոր ինստիտուտների հետազոտությունների ծրագրերը եւ կոորդինացնել միության ինժեներային սեյսմաբանության ուղղությամբ տարվող ողջ աշխատանքը: Հետագայում Ա.Գ. Նազարովը նշանակվում է այդ խորհրդի ինժեներային սեյսմաբանության գծով հանձնաժողովի նախագահ:

Ա. Գ. Նազարովի գիտական հետազոտությունները նվիրված են դեֆորմացվող պինդ մարմնի մեխանիկայի, շինարարական մեխանիկայի, սեյսմակայուն շինարարության եւ ինժեներային սեյսմաբանության, մաթեմատիկական անալիզի բնագավառներին: Նշված տարբեր բնագավառներում նա ստացել է հիմնարար արդյունքներ, որոնք համընդհանուր ճանաչում են ստացել գիտական աշխարհում:

Նրա ստացած արդյունքներից հատկապես նշանակալից են կառուցվածքների սեյսմակայունությանը վերաբերող հետազոտությունները, որոնք ամփոփված են նրա «Սեյսմիկ ուժերի ինժեներային վերլուծության մեթոդ» (1959թ.), «Պինդ դեֆորմացվող մարմինների մեխանիկական նմանության մասին» (1968թ.) մենագրություններում եւ դարձել են այդ բնագավառների մասնագետների սեղանի գրքերը: Նա նաեւ համահեղինակ է «Շենքերի եւ կառուցվածքների սեյսմակայունության տեսության հիմունքները» մենագրության (1970թ.):

Նրա կողմից ստացված տեսական հիմնարար արդյունքները ունեն խիստ պրակտիկ կիրառություն: Ստացված ընդլայնված մոդելացման տեսության հիման վրա ուսումնասիրվել է մի շարք պատասխանատու կառույցների սեյսմակայունությունը, այդ թվում նաեւ Հայաստանի ատոմակայանի սեյսմակայունությունը: Ա. Գ. Նազարովի կողմից ուսումնասիրվել են ատոմային ռումբի պայթեցման դեպքում կառուցվածքների վրա դրա ազդեցության հարցերը: Պայթեցումների միջոցով ստացվել են լուրջ արդյունքներ շենքերի դիմացկունության բնագավառում, ինչպես նաեւ ինժեներային սեյսմաբանության բնագավառում: Առաջարկվել է երկրաշարժերի ուժի որոշման նոր չափանիշ: Դրա հիման վրա մշակվել է սեյսմիկ նոր սանդղակ, որը հավանության է արժանացել տվյալ բնագավառի մասնագետների կողմից: Այդ արդյունքները ամփոփվել են «Երկրաշարժի ինտենսիվության քանակական գնահատականը» (1974թ.) մենագրության մեջ:

Ա. Գ. Նազարովի կողմից ստեղծվել են նաեւ սարքեր երկրաշարժի ուժը չափելու համար: Օրինակ՝ բազմաճոճանակավոր սեյսմոմետրը, որը օրիգինալ սեյսմոմետր է:

Նազարովն իր աշխատանքներում ստացել է լուրջ արդյունքներ երկրաշարժերի կանխագուշակման պրոբլեմի լուծման ուղղությամբ:

Երկար տարիներ Ա. Գ. Նազարովն աշխատել է այլ բնագավառներում, ինչպիսին է տրանսֆինիտիվ անալիզի բնագավառը, որի շուրջը կատարած աշխատանքի արդյունքներն ամփոփվել են նրա «Տրանսֆինիտիվ անալիզի էլեմենտները» աշխատությունում, որտեղ բերված են սկզբունքորեն նոր արդյունքներ:

Զարմանալի է, թե ինչպես մարդը կարող է ստանալ հիմնարար արդյունքներ իրարից բավական տարբեր բնագավառներում: Սա էլ հենց նրա տաղանդի արտացոլումն է:

Ա. Գ. Նազարովի աշխատությունները թարգմանված են աշխարհի մի շարք լեզուներով: Նա հեղինակ է մոտ 140 գիտական հոդվածների: Լինելով սեյսմակայունության դինամիկական տեսության հիմնադիրներից մեկը՝ իր ստացած գիտական արդյունքներով Նազարովը համարվում էր տվյալ բնագավառի նախկին ԽՍՀՄ ամենաճանաչված գիտնականը, եւ ուներ համաշխարհային ճանաչում:

Ա. Գ. Նազարովն օժտված էր նաեւ գիտակազմակերպչական ունակություններով:

1961-ին նրա ղեկավարությամբ հիմնադրվեց ԳԱ Գյումրիի երկրաֆիզիկայի եւ ինժեներային սեյսմաբանության ինստիտուտը, որը շատ կարճ ժամանակում ստացավ համընդհանուր ճանաչում եւ պարգեւատրվեց Կարմիր դրոշի շքանշանով: Այդ ինստիտուտը ներկայումս կոչվում է Ա. Գ. Նազարովի անունով: Նրա անմիջական ղեկավարությամբ ստեղծվեց Գառնիի երկրաֆիզիկական ստորգետնյա դիտարանը, որը ունիկալ դիտարան է աշխարհի մասշտաբով: Այստեղ նախատեսված էր կատարել գիտական լուրջ հետազոտություններ երկրաֆիզիկայի եւ սեյսմաբանության բնագավառներում: Նա զբաղեցրել է նաեւ ՀԽՍՀ ԳԱ «Գիտություններ երկրի մասին» բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղարի պաշտոնը:

Ա. Գ. Նազարովը կատարում էր նաեւ հասարակական լայնածավալ աշխատանքներ: Նա ԽՍՀՄ ԳԱ նախագահությանը կից սեյսմաբանության եւ սեյսմակայուն շինարարության խորհրդի շրջանակներում ղեկավարել է մի շարք հանձնաժողովներ, որտեղ լուծվել են գիտական եւ կազմակերպչական շատ կարեւոր հարցեր: Նա եղել է նաեւ «Սեյսմաբանություն» եւ ՀԽՍՀ ԳԱ «Զեկույցներ» հանդեսների գլխավոր խմբագիր:

Ա. Գ. Նազարովը մի քանի անգամ ընտրվել է ԽՍՀՄ Գերագույն խորհրդի, Երեւանի քաղխորհրդի, Գյումրիի քաղխորհրդի պատգամավոր: Պարգեւատրվել է Լենինի եւ Կարմիր դրոշի շքանշաններով ու մի շարք մեդալներով:

Ա. Գ. Նազարովն ուներ նաեւ մարդկային անգնահատելի հատկանիշներ: Նա չափազանց բարձր ինտելեկտով օժտված եւ բազմակողմանի զարգացած մարդ էր, չափազանց ուշադիր էր իրեն շրջապատող մարդկանց նկատմամբ եւ միշտ պատրաստ էր օգնել նրանց ու լինել օգտակար: Նա աներեւակայելի պատասխանատվությամբ էր մոտենում իր պարտականություններին: Նրա ղեկավարությամբ տասնյակ մարդիկ պաշտպանել են թեկնածուական եւ դոկտորական թեզեր:

Ա. Գ. Նազարովի աշակերտները եւ նրան ճանաչողները պետք է վառ պահեն նրա հիշատակը, եւ գալիք սերունդներին ներկայացնեն նրան որպես հանճարեղ մարդու, գիտնականի եւ քաղաքացու:

Հայերն անկախ դավանանքից եւ կուսակցությունից պետք է իրար սիրեն ու գովեն եւ ոչ թե ատեն ու փնովեն:

**Ս.Ա. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ**
**ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս**
**Ս.Ս. ԴԱՐԲԻՆՅԱՆ**
**Ֆիզ.-մաթ. գիտ. դոկտոր**

ՆՈՐԱԾՆԱՅԻՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆԸ ՆՎԻՐՎԱԾ

# ՎիվաՍել-ՄՏՍ-ի եւ BirthLink-ի համագործակցության շնորհիվ, ներկայացվել է շնչառական թերապիայի նորագույն մեթոդը

*Մոտ 50 միլիոն դրամ արժողությամբ նեոնատալ ինտենսիվ խնամքի սարքավորումներ՝ նորածնային 9 բաժանմունքներին*

**Երեկ ՎիվաՍել-ՄՏՍ-ի գլխամասային գրասենյակում կազմակերպվել էր հատուկ սեմինար՝ Հայաստանի 9 բուժհաստատությունների նեոնատոլոգների համար: Սեմինարի նպատակը բուժանձնակազմին հատուկ նեոնատալ խնամքի սարքավորումների եւ սարքերի օգտագործման հմտություններ եւ գիտելիքներ հաղորդելն էր: Ի դեպ, նորագույն այս մեթոդը դեռեւս չի կիրառվում եվրոպական մի շարք եւ հետխորհրդային տարածաշրջանի երկրներում: Շնչառական այս սարքավորումներն անհրաժեշտ են թե նախքան ծնունդը եւ թե ծնվելուց հետո բարդությունների դեպքում մանուկների կյանքը փրկելու համար:**



**Սեմինարին մասնակցել են Վեդիի, Սիսիանի, Գյումրիի, Կապանի ծննդատների, ինչպես նաեւ «Մուրացան» համալսարանական հիվանդանոցի, Վերարտադրողական առողջության, պերինատոլոգիայի, մանկաբարձության եւ գինեկոլոգիայի ինստիտուտի, «Էրեբունի» բժշկական կենտրոնի, «Շենգավիթ» բժշկական կենտրոնի, Նոր Նորքի Սբ. Գրիգոր Լուսավորիչ բժշկական կենտրոնի ծննդատների եւ համապատասխան բաժանմունքների մասնագետները:**

**ՎիվաՍել-ՄՏՍ-ի եւ բրիտանական BirthLink ՀԿ-ի համագործակցության արդյունքում նշված մարզերում եւ մայրաքաղաքում գործող ծննդատներն ու բաժանմունքները համալրվել են հետեւյալ սարքերով եւ սարքավորումներով.**

**անմիջապես ծննդից հետո ջերմության ապահովման եւ վերակենդանացման՝ արտացոլող ջերմապահովման սարք,**

**պղպջակային CPAP,**

**քթային ճանապարհով բարձր հոսքով շնչառական համակարգեր,**

**հեղուկների երակային ներարկման պոմպ,**

**պուլսօքսիմետր,**

**թթվածնային թերապիայի սարք:**

**Ծննդատներին եւ ծննդօգնության բաժանմունքներին տրամադրվել են նշված սարքավորումների եւ սարքերի տարբեր կոմպլեկսներ՝ կախված տվյալ բուժհաստատության կարիքներից:**

**Այս ծրագրի ներդրման բազմաթիվ դրական արդյունքները դեռ կգնահատվեն մոտակա տարիների ընթացքում: Այսպես օրինակ, շնչառական թերապիայի ոչ ինվազիվ մեթոդների ներմուծումը CPAP-ի տեսքով ամբողջությամբ փոխել է անհասների թոքային հիվանդությունների բուժման մոտեցումները: Նոր մեթոդները եւ ժամանակակից սարքավորումները թույլ են տալիս խուսափել այնպիսի վտանգավոր եւ թանկարժեք մեթոդներից, ինչպիսիք են ինտուբացիան եւ թոքերի արհեստական օդափոխումը, որոնք շատ լավ հայտնի է, որ կարող են ոչ միայն թոքերի վնասման պատճառ դառնալ, այլ նաեւ բացասական ազդեցություն ունենալ նորածինների հետագա հոգեշարժողական զարգացման վրա:**

**«Արդեն վեց տարի մենք իրականացնում ենք այս նախագիծը, եւ դրա փորձարարական իրականացումը ցույց տվեց, որ նորածնային հասակում մահացության դեպքերի ցուցանիշը նվազել է: Birthlink-ի հետ համագործակցության արդյունքում մենք կարողացել ենք սարքավորումներ տրամադրել տարբեր մարզերի եւ Երեւանի ծննդատներին, ինչպես նաեւ դասընթացներ կազմակերպել բուժաշխատողների համար: Արդեն իսկ ակնհայտ է, որ նախաձեռնությունը չափազանց կարեւոր է՝ տարբեր բարդություններից եւ հիվանդություններից մանուկների կյանքը փրկելու առումով: Մենք չենք կարող մնալ դիտորդի դերում, երբ նորածինների կյանքը շարունակում է վտանգված մնալ»,-նշել է ՎիվաՍել-ՄՏՍ-ի գլխավոր տնօրեն Ռալֆ Յիրիկյանը:**

**Նորածնային մահացությանը վերաբերող համաշխարհային վիճակագրությունը խոսում փաստ է առ այն, որ նեոնատալ խնամքի ծրագիր իրականացնելն անհրաժեշտություն է: Այսպես՝ կյանքի առաջին տարվա ընթացքում մահանում է ավելի քան 4 միլիոն երեխա: Մահացության դեպքերի երեք քառորդը գրանցվում է կյանքի առաջին շաբաթվա ընթացքում, իսկ ավելի քան մեկ միլիոնը՝ առաջին օրվա ընթացքում:**

**Տրամադրված սարքավորումները նախատեսված են ծնվելուց հետո առողջական խնդիրներ ունեցող եւ ցածր քաշով նորածինների կենսաապահովման համար, ինչը հնարավորություն է տալիս կայունացնելու նրանց վիճակը՝ նախքան Երեւանի կամ մարզկենտրոնի բուժհաստատություններ նրանց տեղափոխելը: Նաեւ հնարավոր կլինի հասնել նրան, որ շատ դեպքերում երեխային տեղափոխելու կարիք չառաջանա: Ծրագրի շնորհիվ բուժհաստատություններն արդեն բավարար թվով անհրաժեշտ սարքավորումներ եւ գիտելիքներ ունեն՝ մահվան գրանցվող ցուցանիշը զգալիորեն կրճատելու համար:**

**Ընդհանուր առմամբ՝ այս տարի բուժհաստատություններին տրամադրվել են մոտ 50 միլիոն դրամ արժողությամբ նեոնատալ ինտենսիվ խնամքի սարքեր եւ սարքավորումներ:**

# Միխայիլ Շվիդկոյի առաքելությունը քաղաքակա՞ն է

ՌԴ մշակույթի նախկին նախարար Միխայիլ Շվիդկոյն, ինչպես հայտնի է, ներկայումս միջազգային մշակութային համագործակցության հարցերով նախագահ Պուտինի հատուկ ներկայացուցիչն է: Շվիդկոյի միջնորդությամբ է կազմակերպվել հայ եւ ադրբեջանցի մտավորականների, հասարակական գործիչների երկու հանդիպում:

Ընդհանուր առմամբ այդ հանդիպումների, այսպես ասած՝ «օգտակար գործողության գործակիցը» շատ ցածր է, եթե ավելին չասվի: Քանի որ կողմերից մեկը՝ Ադրբեջանը հայատյացություն եւ թշնամանք է սերմանում նաեւ մշակույթի եւ հասարակական գործիչների միջոցով: Այդուհանդերձ, հայկական կողմից նման հանդիպումների կազմակերպմանը որեւէ քաղաքական նախապայման կամ խոչընդոտ երբեւէ չի առաջադրվել: Թվում է, սակայն, որ վերաբերմունք փոխելու կամ գոնե որոշ ճշգրտումներ անելու հարկ կա: Դրան է մղում Միխայիլ Շվիդկոյի հարցազրույցը vesti.az-ին (տես՝ http://www.vesti.az/news/179740 ):



Ադրբեջանցի լրագրողի հարցին, թե «Դուք հավանաբար հանդիպել եք նաեւ ղարաբաղցի հայերի, ինչպե՞ս են նրանք արձագանքել Ձեր այցին», Շվիդկոյը հետեւյալ պատասխանն է տվել. «Նրանք հայտնվել են բավական բարդ իրավիճակում: Քչերը կարող են 20 տարի ապրել ինքնահռչակված պետությունում: Հեշտ չէր նայել նրանց դեմքերին՝ սպիներով, ցավով: Ահա թե ինչու ես կարծում եմ, որ ղարաբաղյան հակամարտության կարգավորումը պետք է լինի քայլ առ քայլ, մարդիկ, որ 20 տարի ապրում են այդ տարածքներում, իրենց կյանքը կտրուկ փոխել չեն կարող»:

Շվիդկոյի ասածից հասկացվում է, որ «կյանքը կտրուկ փոխելու» մասին ձեւակերպումը մարդկանց դեմքերի «սպիների» կամ «ցավի» մասին չէ: Մանավանդ որ դրան նախորդում է հակամարտության «քայլ առ քայլ կարգավորելու» նրա ցանկությունը կամ կարծիքը: Հետեւաբար, միջազգային մշակութային համագործակցության հարցերով ՌԴ նախագահի հատուկ ներկայացուցիչն ադրբեջանական լրատվամիջոցին խոստովանել է, որ հայ եւ ադրբեջանցի մտավորականների, հասարակական գործիչների հանդիպումները Լեռնային Ղարաբաղի «հակամարտության կարգավորման քայլերից» մեկն է, որ «այդ տարածքներում ապրող մարդիկ իրենց կյանքը ոչ թե կտրուկ փոխեն, այլ՝ աստիճանաբար»:

Փաստորեն Միխայիլ Շվիդկոյը vesti-az-ի միջոցով ադրբեջանական հանրությանը հորդորել է իր առաքելության մեջ Ադրբեջանի համար «վտանգավոր ոչինչ չտեսնել»: Իսկ դա արդեն քաղաքական ուղերձ է, որը ոչ մի կերպ չի կարող տեղավորվել մշակութային եւ հանրային մակարդակով կողմերի միջեւ շփումներ հաստատելու նպատակադրվածության շրջանակներում:

Անդրադառնալով ադրբեջանցի լրագրողի հարցադրմանը, որ «մարդկանց համար հեշտ չի լինի կտրուկ փոխել իրենց կյանքը նույնիսկ այն դեպքում, երբ ապրուստի միջոցներ չկա՞ն (Լեռնային Ղարաբաղում)», ՌԴ նախագահի հատուկ ներկայացուցիչն այս դիտարկումն է արել. «Դա (ԼՂՀ-ն) ինքնահռչակված ամենահարուստ պետությունը չէ, բայց նրանցից (արցախցիներից) ոմանց (՞- Վ. Ա.) համար թերեւս ներկա կացությունը թանկ է կոմֆորտից: Ես ուզում եմ, որ ադրբեջանցիներն ինձ ճիշտ հասկանան...»:

Սա արդեն հիշեցնում է «Պրավդա»-ի 1988թ. փետրվարյան հոդվածը, որ վերնագրված էր «Հույզեր եւ բանականություն» եւ Լեռնային Ղարաբաղի հայ մեծամասնության պահանջը բնութագրում էր որպես «մի խումբ ծայրահեղականների ձեռքի գործ» եւ կոչ էր անում, որ «աշխատավորությունը չտրվի անհիմն հուզականության, այլ առաջնորդվի բանականությամբ»:

Անցել է քառորդ դար: Մի՞թե դա բավարար ժամանակ չէ, որպեսզի «հույզերի եւ բանականության տեսության» ջատագովների համար պարզ լինի, որ Արցախում ոչ թե «ոմանք», այլ ամբողջ ժողովուրդն է ներկա ինքնիշխան կացությունը գերադասում ադրբեջանական «կոմֆորտից», որ մարդիկ «այդ տարածքներում ապրում են» ոչ թե «արդեն 20 տարի», այլ՝ հազարամյակներ ի վեր, որ Լեռնային Ղարաբաղը «տարածք» է Ադրբեջանի, եւ հայրենիք՝ հայ ժողովրդի համար:

Ի վերջո, Շվիդկոյն ակնարկում է, որ Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահների «հերթական հանդիպում է նախապատրաստվում», ուստի չի բացառում, որ իր առաքելությունը «վերստին պահանջված լինի»: Գուցե արժե՞ մտածել «մշակութային երկխոսության» նպատակահարմարության մասին: Իսկ գուցե vesti.az-ը նենգափոխե՞լ է Շվիդկոյի մտքերը...

ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ

**ՏԵՍԱԿԵՏՆԵՐԸ ՀԱԿԱԴԻՐ ԵՆ**

# Սիրիական ընդդիմությունը Ժնեւ չի գնա Իրանի մասնակցության դեպքում

*Ահմեդ Ջարբայի նախապայմանները*



**Սիրիայի ընդդիմադիր ուժերի գլխավոր կազմակերպությունը՝ Ազգային կոալիցիան, առաջ է քաշել Ժնեւում նախապատրաստվող հաշտության բանակցություններին իր մասնակցության նախապայմանները: Դրանք Արաբական պետությունների լիգայի անդամների հետ հանդիպման ժամանակ հրապարակել է կոալիցիայի ղեկավար Ահմեդ Ջարբան:**

**Ռոյթեր գործակալությունը մեջբերում է Ջարբայի այն խոսքերը, որ Ժնեւի բանակցություններին Իրանի ներկայացուցիչների մասնակցության դեպքում սիրիական ընդդիմությունը կբոյկոտի այդ բանակցությունները: Ջարբան պահանջել է, որ Իրանը բնութագրվի որպես «սիրիական տարածքի զավթիչ»:**

**Ընդդիմությունը սպառնում է Ժնեւի բանակցություններին չմասնակցել նաեւ այն դեպքում, եթե դրանց ընթացքում չնշվեն Սիրիայի նախագահ Բաշար Ասադի պաշտոնաթողության կոնկրետ ժամկետներ:**

**Բացի դրանից, Ահմեդ Ջարբան համաշխարհային ընկերակցությունից պահանջել է ընդունել «սիրիական ժողովրդին» ռազմական օգնություն ցույց տալու «հստակ որոշում»: Անշուշտ, խոսքը ընդդիմությանը զինելու պահանջի մասին է: Ազգային կոալիցիայի ղեկավարը խոստացել է, որ մատակարարվելիք զենքը «չի հայտնվի սխալ ձեռքերում»:**

**Ինչ վերաբերում է բանակցություններին Իրանի մասնակցությանը, Ռուսաստանը կողմ է դրան, մինչդեռ ԱՄՆ-ը հավանություն չի տվել Սիրիայի առնչությամբ այսպես կոչված «Գործողությունների խմբի» մշակած բոլոր համաձայնություններին:**

**Հոկտեմբերին նախագահ Բաշար Ասադը արդեն քննադատել էր Ժնեւյան կոնֆերանսի գաղափարը, կասկած հայտնելով, թե բանակցությունների մասնակիցներն իրոք կներկայացնեն Սիրիայի ժողովրդին: Արաբական «Ալ-Մայադին» հեռուստաալիքի եթերում Ասադը հայտարարել էր, թե «որոշում պետք է ընդունեն սիրիացիները, եւ կարեւոր չէ՝ կհամաձայնվե՞ն արդյոք արտասահմանյան ուժերը»:**

**Ազգային կոալիցիայի ղեկավարությունը նոյեմբերի 9-ին Ստամբուլում կայանալիք նիստում պետք է վերջնական որոշում ընդունի Ժնեւի բանակցություններին սիրիական ընդդիմության մասնակցության վերաբերյալ:**

**Սիրիայի հակամարտության խաղաղ կարգավորմանը նվիրված Ժնեւյան կոնֆերանսի նախապատրաստությամբ սեպտեմբերի սկզբից զբաղվում են ԱՄՆ-ը եւ Ռուսաստանը: Երկու երկրների արտգործնախարարները հույս ունեն, որ կոնֆերանսը տեղի կունենա նոյեմբերին: Սակայն ստույգ ժամկետ առայժմ չի նշվել:**

# Մուրսիի դատավարությունը սկսվեց եւ... հետաձգվեց

*Անվտանգության արտակարգ միջոցառումներ Կահիրեում*

Նոյեմբերի 4-ին Կահիրեում սկսվել է Եգիպտոսի նախկին նախագահի, իսլամիստ Մուհամմեդ Մուրսիի եւ «Մուսուլման եղբայրներ» շարժման 14 ղեկավարների դատավարությունը: Սակայն ամբաստանյալների բացականչությունները, ինչպես նաեւ բանտարկյալի սպիտակ հագուստ հագնելուց Մուրսիի հրաժարումը դատավորին ստիպել են ընդհատել նիստը: Այդ մասին հաղորդում են երկրի պետական լրատվամիջոցները: BBC-ի տեղեկությունների համաձայն, հաջորդ դատական նիստը հավանաբար տեղի կունենա առաջիկա երկուշաբթի՝ նոյեմբերի 11-ին:



Եգիպտոսում ընդունված կարգի համաձայն, առաջին անգամ դատարան ներկայացող ամբաստանյալները պարտավոր են հագնել հատուկ սպիտակ հագուստներ:

Մուհամմեդ Մուրսին եւ «Մուսուլման եղբայրների» ղեկավարները մեղադրվում են Կահիրեի նախագահական պալատի մոտ 2012-ի դեկտեմբերին տեղի ունեցած բախումների ընթացքում սպանության հրահրելու մեջ: Այն ժամանակ սպանվել էր 7 մարդ:

Մուրսիի կողմնակիցների կոչով նոյեմբերի 4-ին բողոքի ցույցեր են անցկացվել դատարանի շենքի մոտ եւ երկրի տարբեր վայրերում:

Հուլիսյան իշխանափոխությունից հետո Եգիպտոսի բանակը գաղտնի էր պահում տապալված նախագահ Մուրսիի կալանքի վայրը: Նրա դատավարությունն անցկացվում է Կահիրեի արեւելքում գտնվող ոստիկանական ակադեմիայի շենքում: Նոյեմբերի 4-ի վաղ առավոտյան նրան այնտեղ էին բերել ուղղաթիռով: Դատավարության կապակցությամբ Եգիպտոսում ձեռնարկվել են անվտանգության արտակարգ միջոցներ: Ոստիկանության ակադեմիայի շուրջը տեղադրվել են արգելափակոցներ, իսկ Մուրսիի կողմնակիցների հնարավոր սադրանքների կասեցման նպատակով բարձր մարտավիճակի են բերվել իրավապահ մարմինների 20 հազար աշխատակիցներ:

Կահիրեի նախագահական պալատի մոտ 2012-ի դեկտեմբերին տեղի ունեցած վերոհիշյալ բախումների եւ սպանությունների համար Մուրսիին եւ մյուս ամբաստանյալներին սպառնում է մահապատիժ:

Եգիպտական բանակի սպաները նախագահ Մուրսիին տապալեցին եւ ձերբակալեցին 2013 թ. հուլիսի 3-ին: Ձերբակալությանը նախորդել էին բնակչության զանգվածային ցույցեր, որոնց մասնակիցները դժգոհում էին իշխանությունների իսլամիստական ուղեգծից եւ երկրում կյանքը կարգավորելու անկարողությունից:

Պ. Ք.

400 ՑՈՒՑԱՆՄՈՒՇՆԵՐՈՎ

# Շիրակի հնագույն մշակույթը կներկայացվի Հայաստանի պատմության թանգարանում

«Գյումրին 2013 թվականի ԱՊՀ մշակութային մայրաքաղաք» ծրագրի շրջանակներում նոյեմբերի 8-ին Երեւանում, Հայաստանի պատմության պետական թանգարանում կբացվի «Շիրակը մշակույթի օրրան» հնագիտական ցուցահանդեսը: Նպատակը Շիրակի երկրագիտական թանգարանի նյութերի հիման վրա երեւանցիներին եւ մայրաքաղաքի հյուրերին Հայոց այս պատմագավառի հնագույն նյութական ու հոգեւոր մշակույթը ներկայացնելն է:

Շիրակի թանգարանի տնօրեն **Համազասպ Խաչատրյանի** տեղեկացմամբ, ցուցահանդեսը ժամանակագրական առումով բավական ընդգրկուն է, ներառում է վաղ քարի դարից մինչեւ քրիստոնեություն ընկած ժամանակահատվածը: Մոտ 400 ցուցանմուշների եւ իրերի միջոցով ներկայացվելու են Շիրակի բնակչության տարբեր դարաշրջանների քաղաքակրթության, կենցաղի դրսեւորումները, գեղարվեստական ճաշակը եւ այլն, կյանքի ու հասարակության զարգացման բոլոր կարեւոր շրջանները: Ցուցադրվելու են նաեւ մարզի տարածքում վերջին տարիներին պեղված նյութեր ու իրենց բնույթով եզակի իրեր, մամոնտի կմախքի հատվածներից մինչեւ կենցաղային ու ծիսական օգտագործման անոթներ, կանացի արդուզարդի առարկաներ:

Ըստ կազմակերպիչների, այս ցուցահանդեսը կարեւոր է նրանով, որ Շիրակի հնագույն մշակույթն ամբողջական առումով առաջին անգամն է ներկայացվում մայրաքաղաքում: Նախկինում եղել են այլ, թեմատիկ ցուցահանդեսներ, որոնցից մեկը մի քանի տարի առաջ «Էրեբունի» թանգարանում կազմակերպված «Պաշտամունք եւ կրոն. պահպանված մասունքներ» խորագրով ցուցադրանքն է եղել «Եվրոպական ժառանգության օրերի» շրջանակներում:

ԳԵՂԱՄ ՄԿՐՏՉՅԱՆ

# Ադելինա ֆոն Ֆիրքսենբերգն անդրադառնում է իր հայկական արմատներին

«Ապագայ» շաբաթաթերթի (Կանադա) հաղորդմամբ Թեսալոնիկի ժամանակակից արվեստներին նվիրված չորրորդ բիենալեն, որն սկսվել է սեպտեմբերի 18-ին, տեւելու է մինչեւ 2014 թվի հունվարի 31-ը: Արվեստի աշխարհի 50 լավագույն անունները համախմբող կարեւոր այդ միջոցառման պատասխանատուն եւ համադրողը շվեյցարահայ Ադելինա ֆոն Ֆիրքսենբերգն է, որ մեծ հարգանք է վայելում Հունաստանում:

«Թո վիմա» թերթին տված հարցազրույցում նա անդրադարձել է իր հայկական արմատներին եւ իրեն Հունաստանին կապող առնչություններին:

Ադելինան Շվեյցարիայի քաղաքացի է: Ծնունդով պոլսեցի: Անկախ աշխատող է, զբաղվում է մարդու իրավունքների պաշտպանության հարցեր արծարծող ֆիլմերի արտադրությամբ: Նախագահն է «Art For the World» հաստատության: Մասնագիտությամբ քաղաքագետ է, բայց ուսանողական տարիներից ներգրավվել է արվեստի ոլորտում եւ ղեկավարել Գրենոբլի արվեստների դպրոցը: Գործակցել է ՄԱԿ-ի եւ այլ միջազգային կազմակերպությունների հետ եւ իր աշխատանքների համար պարգեւատրվել է Վենետիկի 45-րդ բիենալեի ընթացքում:

Հ.Ծ.

# «Կապ հաստատիր»

## *Քննարկում եւ մրցանակաբաշխություն Կալիֆոռնիայում*

«Դրամատիկական արվեստների հայկական ընկերությունը» (Կալիֆոռնիա, ԱՄՆ) նպատակ է հետապնդում թատերական եւ կինոարվեստի միջոցով հայերի ձայնը լսելի դարձնել ամբողջ աշխարհով մեկ: Կազմակերպությունը նեցուկ է կանգնում դրամատուրգներին, կինոարտադրիչներին, սցենարիստներին՝ տալով նրանց հնարավորություն եւ միջոցներ կատարելու իրենց գործը:

Կազմակերպության նախաձեռնությամբ նոյեմբերի 8-ին 5 մասնագետներ իրենց փորձառությունն են հաղորդելու երիտասարդներին Բեվերլի Հիլզի «WGA» թատրոնի դահլիճում կայանալիք միջոցառման ժամանակ: «Կապ հաստատիր» (Make the Connection) ընդհանուր խորագրի ներքո փորձ է արվելու, ըստ այդ առթիվ ստացված հաղորդագրության, միավորելու ժամանցային մշակույթի ոլորտում ներգրավված հայերին: Մասնակցելու են «Էմմիի» մրցանակակիր պրոդյուսեր Ռոբերտ Փափազյանը, թատրոնի տնօրեն Մայքլ Փերեցյանը, մրցանակակիր վիպասան Արիս Ջանիկյանը, «Էմմիի» մրցանակակիր ռեժիսոր եւ պրոդյուսեր Հենք Սարոյանը եւ «Էմմիի» մրցանակակիր դերասան, գրող, պրոդյուսեր եւ ռեժիսոր Մայքլ Գուրջյանը:

Միջոցառում-քննարկման համադրողն է վերոնշյալ ընկերության հիմնադիր, գրող եւ պրոդյուսեր Բիանկա Բահասուրյանը: Հանդիսությունը վարելու է ամերիկյան հեռուստատեսության ճանաչված անձնավորություն Ջիլ Սիմոնյանը:

Միջոցառման երկրորդ մասում կայանալու է «Լիլիան եւ Վառնում Պոլ» 2013 թվի սցենարների մրցույթում հաղթողների պարգեւատրումը: 10 հազարական դոլար շնորհվելու են ավարտական փուլ հասած Կարին Հովհաննիսյանին եւ Ալեք Մուհիբյանին («1915» ֆիլմի համար), Երվանդ Քոչարին եւ Ջիանի դի Կառլոյին («13րդ պատկերը» ֆիլմի համար) եւ Լեւոն Մինասյան եւ Էրիկ դե Ռոքֆորին («Երկրորդ ճանապարհորդությունը» ֆիլմի համար):

Ժյուրիի անդամներն են եղել պրոդյուսեր Անահիտ Նազարյանը, դերասան Մայքլ Գուրջյանը եւ պրոդյուսեր Հենք Սարոյանը:

Հ.Ծ.

# Գոյատեւման բոյսը կամ կյանքի բալասանը...

## *Բեմադրիչ Հրաչյա Աշուղյանի հոբելյանի առթիվ*

***«Ազգ»ը անդրադարձել է արվեստի նշանավոր գործիչ, ռեժիսոր, մանկավարժ Հրաչյա Աշուղյանի 75-ամյակին: Ստորեւ հրատարակվող սրտի խոսքը դարձյալ ադամանդյա այդ հոբելյանին է վերաբերում: Հեղինակը հալեպահայ դեղագործ, տեղի Համազգային թատերախմբի վաստակավոր (շուրջ 40 տարի) դերասան, թատերական գործիչ է, որ հասկանալի պատճառներով ներկայումս բնակություն է հաստատել Երեւանում:***



Այս առեղծվածը կամ անորոշ ու անգտանելի հանելուկը, որուն փնտրտուքն ու որոնումը դարձեր է տեւական ու կշարունակվի մշտապես մինչեւ օրս էլ որպես կարիք՝ հոգուս մարդկային երկարակեցության...

Աշխարհի վրա ամեն մարդ կերազէ ու կփափագի հասնիլ հավերժության, ինչ-որ գանձեր դիզելով, հսկայական ապարանքներ կառուցելով, նույնիսկ կեղեքումներով, բռնատիրությամբ ու դաժանությամբ հասնելու իր փափագներուն ու նպատակներուն, որոնց բոլորի ետին պահվածքը գոյատեւության իղձն է, այսինքն՝ ի խնդիր ամենաերկար ժամանակ ապրելու աշխարհի վրա...

Վերջերս կիմանանք, թե հույսի նշույլներ ի հայտ են եկած գիտական երկնակամարին վրա, հասնելու համար գաղտնիքներու գաղտնիքին ու երազներու երազին, որ կկոչվի հավերժություն, կամ երկար ժամանակ մը գոյատեւել այս կյանքին մեջ: Բայց, ի դեպ, անպայման այդ գոյատեւումն ալ վերջ մը պիտի ունենա անկասկած եւ այս պահուն հարցում մը կուգա տողանցել մտքիս մեջ. արդյոք կյանքը երկարությամբ եւ օրերու ու տարիներու թիվով կհավերժանա՞. չեմ կարծեր, քանի որ ամեն բան զենիթ մը, գագաթնակետ մը ունի ու վերջ մը, եւ որքան որ ալ բարձրանա վիճակագրական գիծը, դատապարտված է ի վերջո խոնարհիլ դեպի ցածը... Իսկ երբ գա ու հասնի այդ վերջը, մարդ արարածին հույսերն ու երազները կրկին հոդս պիտի ցնդին, դիզած գանձերն այստեղ կմնան, կառուցած պալատներն ալ հոս կմնան, իսկ ինք կերթա կորչիլ անհայտ մթության գիրկը՝ հսկայական այն դարպասի ետին, ուր երբեք արեգակը չի ծագիր... Այստեղ կարելի չէ չհիշել անմահն Թումանյանի ոսկեղեն քառյակը՝ «Մահը մերն է, մենք մահինը, մարդու գործն է միշտ անմահ»: Ուրեմն ի՞նչ հարկ կա հավերժության ու երկարատեւ կյանք փնտրել դեղաբույսերու եւ կամ այլ բալասաններու մեջ ի խնդիր կյանքի գոյատեւման...

Եթե իսկապես հավերժանալ կուզես՝ փորձէ միշտ Աստուծո քեզ բաշխած շնորհները փայլեցնել, հղկել ու զարգացնել, որպեսզի այդ ձիրքերուդ պտուղները բարգավաճին, հասուննան ու քաղցրանան ու բոլորի քիմքին ու ճաշակին հաճելի թվին երկար տարիներու ընթացքին: Ահա ա՛յդ պարագային է, որ դուն հավերժ ես, երկարակյաց ես ու գոյատեւությանդ իղձը գոհացուցած կըլլաս:

Այս օրերուն այդպիսի օրինակելի ու խորհրդանշական բարեկամ ու գործակից մը ունեցած ըլլալու հաճույքն է, որ կվայելեմ հանձին պրոֆեսոր Հրաչյա Աշուղյանի՝ բեմադրիչ, դերասան ու մտքի մարդ, բեմի երկար տարիներու խնկարկու, որ հոկտեմբերի 15-ին արժանացավ արվեստի վաստակավոր գործիչի կոչման, որուն իսկապես արժանի է ան բառին բովանդակ առումով: Նույն օրը հիշատակվեցավ նաեւ անոր 75-ամյա հոբելյանը: Հոբելյար արվեստագետին հետ միասին աշխատելու հաճույքն եմ վայելած՝ Ժիրայր Անանյանի «Կարուսել» ներկայացման պատրաստության չորս ամիսներու ընթացքին, Հալեպի մեջ:

Այսօր ինձի համար ամենագեղեցիկ առիթն է ի սրտե շնորհավորելու հարգարժան ու սիրելի բարեկամս իր առաջին կարգի արվեստագետի կոչման, նաեւ 75-րդ հոբելյանի զույգ առիթներով, եւ իր անձնավորությունը որպես օրինակելին ներկայացնելու բոլոր անոնց, որոնք կձգտին ու կերազեն հասնիլ հավերժության, ինչ-որ գանձեր դիզելով, ապարանքներ կառուցելով: Գոյատեւելու ու շատ երկար ապրելու համար անօգուտ ու անիմաստ ջանքեր, եթե այդ բոլորը պիտի չծառայեն իսկական ազգօգուտ նպատակներու: Մարդիկ կրնան ձիրքերով չծնիլ, բայց կրնան շատ հաճախ իրենց կարողություններն ի նպաստ դնել ձիրքերու ու անոնց տերերուն օժանդակության ծառայեցնել: Ահա՛ ճիշտ այն ատեն է, որ անոնք կհավերժանան ու կհիշվին առհավետ ու կգոյատեւեն, կանմահանան...

Արդարեւ, «Մահը մերն է, մենք մահինը, մարդուս գործն է միշտ անմահ»:

ԺՈՐԺ ՎԱՆԼՅԱՆ
Երեւան

# Կինոարտադրությունում այսուհետ կներգրավեն նաեւ հաշմանդամները

Ցավոք, այսօր հաշմանդամները մղվել են երկրորդ պլան՝ ունենալով մի շարք չլուծվող խնդիրներ՝ թեքահարթակներից մինչեւ աշխատատեղեր:

Գործատուներից շատերը նրանց չեն ընդունում աշխատանքի: Ինչպե՞ս պետք է լուծվի հաշմանդամների խնդիրը դժվար է ասել, քանի դեռ մարդկանց գիտակցությունը չի զարգացել այնքան, որ նրանցից չխուսափեն, դեռ ավելին՝ ձեռք մեկնեն հնարավոր բոլոր տարբերակներով: Այսօր մատների վրա կարող ենք հաշվել կազմակերպություններ, որոնք ընդունում են աշխատանքի հաշմանդամների: Անշուշտ չմոռանանք նաեւ երկրում տիրող գործազրկության խնդիրը:

ՕՐԴ ՖԻԼՄ

Վերջերս «Օրդֆիլմը» «Save the Children International» կազմակերպությանը իր Life ծրագրով իրականացրեց հետաքրքրական մի նախաձեռնություն:

«Save the Children International» կազմակերպությունն ուներ բիզնես ծրագիր եւ «Օրդֆիլմը»՝ որպես ընկերություն ներկայացրեց իր բիզնես ծրագիրն ու հաղթեցինք: Համագործակցության մեկնարկն արդեն տրված է ու հաշմանդամներն արդեն ներգրավվել են նկարահանման գործընթաց՝ ինտեգրվելով հասարակությանը:

Ծրագրի կետերից մեկն այն է, որ «Օրդֆիլմը» պետք է մեկ տարվա ընթացքում ընկերություն աշխատանքի ընդուներ 15 աշխատողի, որոնցից 12 պետք է հաշմանդամ լինեն: Ծրագրում չկար վերապատրաստում, սակայն «Օրդֆիլմը» գործունեության սկզբից իր առջեւ խնդիր էր դրել նախ աշխատանքի ընդունել երիտասարդների, ինչպես նաեւ նրանց բոլորին վերապատրաստեր իրենց կողմից մշակված կրթական ծրագրով՝ ԿԳ նախարարության կողմից հաստատված:

Այս անգամ կրթական այդ ծրագրում ներառեցին նաեւ հաշմանդամություն ունեցող մարդկանց: «**Ազգի**» հետ զրույցում այս ամենի մասին տեղեկացրեց «Օրդֆիլմ» կինոընկերության տնօրեն Հայկ Օրդյանը: Նրա հավաստմամբ հետաքրքրական կուրս է ստացվել, որն իր համար անսպասելի էր. «Չէի սպասում, որ նման արդյունք կունենանք: Հատկանշական է, որ հաշմանդամություն ունեցողների մեջ ներուժը, ձգտումը շատ-շատ է, որի համար շատ ուրախ եմ»:

Հայկ Օրդյանի փոխանցմամբ, «Հեռուստատեսային հմտություններ» եռամսյա վարպետության դասընթացի շրջանակում իրենք սովորեցնում են հեռուստառեժիսուրա, հեռուստալրագրություն, հեռուստաօպերատորություն, հեռուստամոնտաժ եւ հեռուստամենեջմենթ մասնագիտությունների հիմունքներ, որին զուգահեռ իրականացվում է նաեւ պրակտիկ աշխատանք:

Ուրախալի է, որ նման նախաձեռնություններով հանդես եկող մարդիկ եւ ընկերություններ դեռեւս կան՝ ինչպես «Օրդֆիլմը», այնպես էլ ՎիվաՍել ՄՏՍ-ը, Արտակարգ իրավիճակների նախարարությունը:

Հուսանք, որ սա օրինակ կլինի մյուս կազմակերպությունների համար:

ՄԱՆԱՆԱ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

# Մարզական

## Հենրիխ Մխիթարյան. «Բորուսիան» հենց այն թիմն է, որտեղ կարող եմ աճել»

***Հայաստանի հավաքականի եւ Դորտմունդի «Բորուսիայի» կիսապաշտպան Հենրիխ Մխիթարյանը հարցազրույց է տվել գերմանական Die Welt-ին, որը ներկայացնում ենք ընթերցողների ուշադրությանը:***



**- Ինչո՞ւ ես ընտրել «Բորուսիան», չէ՞ որ լավ առաջարկներ ունեիր Անգլիայից:**

- Այո, ամառային տրանսֆերային պատուհանի ժամանակ ընտրության մի քանի տարբերակներ ունեի: Սակայն ընտրեցի «Բորուսիան», քանի որ ինձ հոգեհարազատ է թիմի խաղաոճը: Դոնեցկի «Շախտյորի» կազմում չեմպիոնների լիգայի մրցաշարում խաղացել եմ «Բորուսիայի» դեմ: Այս թիմը ոչ միայն ֆանտաստիկ ֆուտբոլ է ցուցադրում, այլեւ այնպես է խաղում, որն ինձ համար է: Ուստի որոշեցի, որ «Բորուսիան» հենց այն թիմն է, որտեղ կարող եմ աճել:

**- «Բորուսիան» քո տրանսֆերի համար 27,5 մլն եվրո վճարեց, սակայն եթե տեղափոխվեիր Անգլիա, կարող էիր ավելի շատ գումար վաստակել:**

- Այո, հնարավոր էր, սակայն ինձ համար ֆուտբոլում գումարն այնքան էլ կարեւոր չէ: Ես ապրում եմ ֆուտբոլով, սիրում եւ զգում եմ ֆուտբոլը, մտածում եմ ֆուտբոլի մասին: Եթե լավ խաղամ, այդ գումարները կվաստակեմ: Եկել եմ Դորտմունդ, որպեսզի ֆուտբոլ խաղամ, այլ ոչ թե նստեմ պահեստայինների նստարանին: Իսկ Անգլիայի պրեմիեր լիգայում այդ վտանգը կար:

**- Հայաստանում 3 անգամ տարվա լավագույն ֆուտբոլիստ ես ճանաչվել: Քեզ ազգային հերոս զգո՞ւմ ես:**

- Ոչ, իհարկե ոչ: Ես սովորական տղա եմ, որը երբեք չի երազում լավագույն ֆուտբոլիստ դառնալու մասին: Իհարկե, ճանաչվել եմ լավագույն ֆուտբոլիստ, ինձ շատերն են ճանաչում, ինքնագիր են խնդրում: Ես սրտանց տալիս եմ ինքնագիր, քանի որ դա ֆուտբոլիստի կարիերայի մի մասն է կազմում: Եթե այդ ամենը մարդկանց երջանկացնում է, ապա դու քեզ նույնպես երջանիկ ես զգում: Բայց ինձ «աստղ» չեմ համարում:

**- Դորտմունդում քո հայրենիքից ինչ-որ բան պակասո՞ւմ է:**

- Ոչ (ծիծաղում է): Մայրս ու տատիկս ինձ պարբերաբար այցելում են:

**- Մինչեւ մրցաշրջանի մեկնարկը բոլոր փորձագետները պնդում էին, որ Գերմանիայի չեմպիոն չի կարող լինել որեւէ այլ ակումբ՝ բացառությամբ Մյունխենի «Բավարիայի»:**

- Կարող եմ ասել, որ կանենք հնարավոր ամեն բան, որպեսզի հաղթենք յուրաքանչյուր խաղում: Իսկ մրցաշրջանի վերջում կտեսնենք, թե ինչ կստացվի:

**- Արդյոք «Բորուսիան» չեմպիոնների լիգայի ֆավորիտ է համարվում:**

- Այս մրցաշարում ֆավորիտներ չկան: Սա մի մրցաշար է, որտեղ չպետք է շատ սխալներ թույլ տաս: Ուստի հարցը ոչ միայն թիմի ցուցադրած որակների, այլ նաեւ կայունության մասին է:

**- Այս շաբաթ լավ նորություն ստացվեց. Յուրգեն Կլոպը մինչեւ 2018-ը երկարաձգեց պայմանագիրը «Բորուսիայի» հետ:**

- Իսկ ո՞վ է ասում, որ դա լավ նորություն է (ծիծաղում է): Եթե ավելի լուրջ, ապա դա հիանալի նորություն է, քանի որ շատ հաճելի է աշխատել նրա հետ: Կլոպը ոչ միայն հիանալի մարզիչ է, այլեւ հիանալի մարդ:

## «Արարատը» շարունակեց հաղթարշավը

**Ֆուտբոլի Հայաստանի բարձրագույն խմբի առաջնության 11-րդ տուրում ուշադրության կենտրոնում էր Կապանում կայացած հանդիպումը մրցաշարի ամենաարդյունավետ թիմի՝ «Գանձասարի» եւ ամենահուսալի պաշտպանությունն ունեցող «Արարատի» միջեւ: «Գանձասարը» մինչեւ այդ հանդիպումը 6 խաղ շարունակ անպարտելի էր: Արարատցիներն էլ վերջին 8 հանդիպումներում չէին պարտվել ու 5 խաղ շարունակ դարպասն անառիկ էին պահել: Կապանում էլ «Արարատի» դարպասապահ Ստեփան Ղազարյանն ամուր փակի տակ պահեց դարպասը, իսկ ահա նրա խաղընկերներին 67-րդ րոպեին հաջողվեց խփել հանդիպման միակ գոլը: «Արարատին» անչափ կարեւոր հաղթանակ պարգեւեց Վահե Մարտիրոսյանը:**

**Ցավոք, հանդիպումից անմիջապես հետո խաղադաշտում 2 թիմերի ֆուտբոլիստների միջեւ քաշքշուկ սկսվեց: Միայն ոստիկանների միջամտությամբ հաջողվեց հանդարտեցնել կրքերը: Ըստ ականատեսների, «Արարատի» սերբ կիսապաշտպան Դարկո Բոնդիչը հայհոյել էր, որին ի պատասխան «Գանձասարի» պաշտպան Հրայր Մկոյանը հրել էր վերջինիս:**

**Այս հաղթանակի շնորհիվ «Արարատն» ավելի ամրապնդեց առաջատարի դիրքը՝ 7 միավորով առաջ անցնելով «Փյունիկից»: Վերջինս «Բանանցի» հետ մրցավեճում բավարարվեց գոլազուրկ ոչ-ոքիով:**

**Մեծ հետաքրքրությամբ էր սպասվում «Միկա»-«Ալաշկերտ» մրցախաղը: Այդ խաղում «Ալաշկերտի» գործողությունները ղեկավարում էր փորձառու մարզիչ Արմեն Գյուլբուդաղյանցը: Ինչպես ցույց տվեց հանդիպման ընթացքը, նոր մարզչին հաջողվել էր զգալիորեն կարգավորել թիմի խաղը: Համենայնդեպս «Միկային» չհաջողվեց գրավել մրցակցի դարպասը: Իսկ ահա «Ալաշկերտը» կարողացավ ընթացիկ առաջնությունում առաջին հաղթանակը տոնել: 78-րդ րոպեին դաշտի տերերը սեփական տուգանային հրապարակում վայր գցեցին Միհրան Մանասյանին: Հենց նա էլ փորձեց իրացնել 11 մ հարվածը, սակայն Արմեն Ֆիշյանը հետ մղեց գնդակը: Բայց Մանասյանն առաջինը հասավ գնդակին եւ 2-րդ հարվածով գրավեց դարպասը: Իսկ ավելացված ժամանակում աչքի ընկավ Արամ Հովսեփյանը, որը մենմենակ դուրս գալով դարպասապահի դիմաց, կրկնապատկեց հաշիվը: Այսպիսով, Արմեն Գյուլբուդաղյանցը նորամուտն «Ալաշկերտում» նշեց հաղթանակով:**

**Ընթացիկ մրցաշրջանում անկայուն ելույթներ ունեցող «Շիրակը» սեփական հարկի տակ 2-1 հաշվով հաղթեց «Ուլիսին»: Շիրակցիներից 2 գոլերն էլ խփեց Դամե Դիոպը: Խաղավերջում Օրբելի Համբարձումյանը կրճատեց հաշիվը: Վերջինս դարձավ «Ուլիսում» գոլ խփած ամենաերիտասարդ ֆուտբոլիստը: Խաղի օրը նա 17 տարեկան 221 օրական էր:**

**Մինչեւ առաջնության 12-րդ տուրի հանդիպումների մեկնարկը, վաղը կկայանան ՀՀ գավաթի քառորդ եզրափակիչ պատասխան 2 հանդիպումները: «Հրազդանում» «Արարատը» կհյուրընկալի «Փյունիկին», որի դաշտում կայացած առաջին խաղն ավարտվել էր ոչ-ոքի՝ 1-1: «Ուլիսն» էլ սեփական հարկի տակ կմրցի «Գանձասարի» հետ: Կապանում գրանցվել էր գոլազուրկ ոչ-ոքի:**

### Մրցաշարային աղյուսակ

| | Խ | Հ | Ո | Պ | Գ | Մ |
|---|---|---|---|---|---|---|
| 1. Արարատ | 11 | 7 | 3 | 1 | 15-4 | 24 |
| 2. Փյունիկ | 11 | 4 | 5 | 2 | 21-15 | 17 |
| 3. Գանձասար | 11 | 4 | 4 | 3 | 23-15 | 16 |
| 4. Միկա | 11 | 3 | 6 | 2 | 12-10 | 15 |
| 5. Շիրակ | 11 | 4 | 3 | 4 | 18-16 | 15 |
| 6. Բանանց | 11 | 2 | 7 | 2 | 8-8 | 13 |
| 7. Ուլիս | 11 | 2 | 3 | 6 | 10-17 | 9 |
| 8. Ալաշկերտ | 11 | 1 | 3 | 7 | 13-35 | 6 |

### Ռմբարկուները

| | | |
|---|---|---|
| Արտակ Դաշյան | «Գանձասար» | 7 |
| Նարեկ Բեգլարյան | «Գանձասար» | 6 |
| Սերժ Դեբլե | «Շիրակ» | 6 |
| Միհրան Մանասյան | «Ալաշկերտ» | 6 |

***ՌԴ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆ***

## Մովսիսյանի գոլը չփրկեց «Սպարտակին»

**ՌԴ առաջնության 15-րդ տուրում Մոսկվայի «Սպարտակը» 1-3 հաշվով պարտվեց «Լոկոմոտիվին»: Վնասվածքից ապաքինված Յուրա Մովսիսյանը թիմի մեկնարկային կազմում էր ու դարձավ «Սպարտակի» խփած միակ գոլի հեղինակը: Դա հայ հարձակվողի 9-րդ գոլն էր ընթացիկ առաջնությունում: Լավագույն ռմբարկուների ցուցակում Մովսիսյանը զիջում է միայն 10-ական գնդակ խփած Արտյոմ Ձյուբային («Ռոստով») եւ Դանիին («Զենիթ»):**

**Մովսիսյանը փոխարինվեց 70-րդ րոպեին, իսկ Արաս Օզբիլիսը խաղադաշտ մտավ ընդմիջումից անմիջապես հետո:**

**ՌԴ ֆուտբոլի առաջնությունը հասեց «հասարակածը»: «Սպարտակը» 30 միավորով 3-րդ տեղում է: Աղյուսակը 36 միավորով գլխավորում է «Զենիթը», 2-րդ տեղում ընթացող «Լոկոմոտիվն» ունի 33 միավոր:**

## Ֆետելը 7-րդ Գրան պրին շահեց

**Աբու Դաբիում անցկացված «Ֆորմուլա-1» դասի ավտոմրցավազքի աշխարհի առաջնության հերթական փուլն էլ նշանավորվեց Սեբաստիան Ֆետելի հաղթանակով: Վերջինս արդեն 7-րդ անընդմեջ Գրան պրին է շահում: Հնդկաստանում անցկացված նախորդ փուլում Ֆետելն իր համար արդեն ապահովել էր հաղթողի կոչումը՝ դառնալով աշխարհի քառակի չեմպիոն: Չնայած դրան, Աբու Դաբիում էլ նա լավագույնն էր:**

**Ընդհանուր հաշվարկով Սեբաստիան Ֆետելն արդեն 322 միավոր է վաստակել եւ վստահորեն գլխավորում է աղյուսակը: 2-րդ տեղում ընթացող Ֆեռնանդո Ալոնսոն ունի 207 միավոր: 3-րդ տեղում Կիմի Ռայկոնենն է՝ 183:**

**«Կոնստրուկտորների գավաթի» մրցաշարում էլ առջեւից է ընթանում Սեբաստիան Ֆետելի թիմը՝ «Ռեդ Բուլը», որը վաստակել է 470 միավոր: 2-րդ տեղում «Մերսեդեսն» է՝ 313, լավագույն եռյակը եզրափակում է «Ֆերարին»՝ 309:**



## 10 համարի մարզաշապիկն ընդմիշտ կմնա Բուրեին



**Հոկեյի ազգային լիգայի «Վանկուվեր» թիմում այսուհետ 10 համարի մարզաշապիկով ոչ մեկը հանդես չի գա: Ժամանակին այդ համարի մարզաշապիկը կրում էր ռուս հանրահայտ հոկեյիստ Պավել Բուրեն, որը հաջողությամբ թիմի կազմում հանդես է եկել 1991-1998-ին: Նա այդ ընթացքում մասնակցել է 429 խաղի եւ խփել է 288 գոլ: Ընդհանուր առմամբ «Ռուսական հրթիռ» մականվամբ հարձակվողը հոկեյի ազգային լիգայի առաջնություններում 702 հանդիպում է անցկացրել, որոնցում վաստակել է 779 միավոր (437 գոլ, 342 արդյունավետ փոխանցում): Նա վեց անգամ մասնակցել է «Բոլոր աստղերի» մրցախաղերին, իսկ 2000-ին ճանաչվել է լավագույնը:**

**Ի պատիվ Պավել Բուրեի, «Վանկուվերում» այլեւս ոչ մեկը չի կրի 10 համարի մարզաշապիկը:**

## Տրապատոնին հավակնորդների թվում է

Իտալացի մասնագետ Ջովանի Տրապատոնին ընդգրկվել է այն մարզիչների ցանկում, որոնք հավակնում են ստանձնել «Միլանի» ղեկը: Ակումբի ղեկավարությունը դժգոհ է թիմի գլխավոր մարզիչ Մասիմիլիանո Ալեգրիի աշխատանքից եւ փոխարինող է փնտրում:

Բացի 74-ամյա Տրապատոնիից, հավակնորդների թվում են նաեւ Կլարենս Զեեդորֆը, Մաուրո Տասոտին եւ Ֆիլիպո Ինձագին: Տրապատոնին վերջին 5 տարիներին մարզում էր Իռլանդիայի հավաքականը: Նա «Միլանի» մանկապատանեկան դպրոցի սան է եւ 12 տարի խաղացել է թիմում:

*Էջը պատրաստեց* **ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ**

ԱԶԳ

## Օրվա հետքերով

*1-ին էջից*

# «Վրացական երազանքը» իրականություն դարձավ

Սաակաշվիլին նաեւ Ադրբեջանի հետ գազատարի համաձայնության էր եկել մեկուսացնելու Հայաստանին ամեն տեսակի տարածաշրջանային զարգացումների ծրագրերից: Նավթի եւ գազի խողովակաշարերը նախատեսված էին անցնել Վրաստանի տարածքով, որպեսզի Հայաստանը զրկվի այդ էներգաաղբյուրներից օգտվելու հնարավորությունից:

Չորս հիմնական պատճառներ կային Վրաստանի կողմից Հայաստանի նկատմամբ նման քաղաքականություն իրականացնելու:

ա) Թբիլիսիի կառավարությունը Հայաստանին ընկալում էր որպես Ռուսաստանի առաջապահ երկիր տարածաշրջանում:

բ) Հայաստանը, որն արդեն շրջափակված էր երկու թշնամական (Թուրքիա եւ Ադրբեջան) երկրներով, չէր համարձակվի բացասաբար վերաբերվել Վրաստանի գործողություններին, որպեսզի աշխարհի հետ շփման երրորդ դուռը չփակի, եւ ստիպված էր, հակառակ մի շարք սադրանքների, հանդուրժել Վրաստանի քաղաքականությունը:

գ) Ջավախքի քմահաճ ինքնավար շրջանը ինքնավարության ձգտումներ ուներ, ուստի Հայաստանը պետք է պատժվեր Ջավախքի քաղաքական նկրտումների համար:

դ) Վրացիք միշտ էլ նախանձել են հայերին, որոնք իրենց մայրաքաղաք Թբիլիսին են կառուցել եւ իրենց հանձնել արծաթե սկուտեղի վրա:

Իհարկե, 2008-ի պատերազմը Ռուսաստանի դեմ էլ ավելի բարդացրեց հարաբերությունները երկու երկրների (Հայաստանի եւ Վրաստանի) միջեւ: Բայց հեղափոխությունը, որը վարդերով էր սկսվել, վրացի ժողովրդին միայն փշեր էր պարգեւում այլեւս, մինչեւ որ թատերաբեմում հայտնվեց Իվանիշվիլին:

Իվանիշվիլու «Վրացական երազանք» կոալիցիան անցյալ տարի ջախջախիչ պարտության մատնեց Սաակաշվիլու «Միացյալ ազգային շարժում» կուսակցությանը, ապահովելով իր համար 85 աթոռ խորհրդարանում: Դրանով սկսվեց ֆրանսիական ոճով համատեղ գոյակցությունը ընդդիմությունը ներկայացնող անզոր նախագահի եւ մեծամասնությանը ներկայացնող վարչապետի եւ խորհրդարանի միջեւ:

Չնայած Արեւմուտքը այդ գործընթացը որակեց «հասունացող ժողովրդավարություն», այդուհանդերձ նախագահն ու վարչապետը բացահայտ «խայթոցներ» փոխանակեցին ամբողջ մեկ տարվա ընթացքում, մինչեւ հոկտեմբերի 27-ի ընտրությունները, երբ Իվանիշվիլու ընտրած թեկնածուն՝ Գեորգի Մարգվելաշվիլին վաստակեց ձայների 67 տոկոսը, իսկ Դավիթ Բակրաձեն՝ 20 տոկոսը, երրորդ տեղում թողնելով (10 տոկոս) Նինա Բուրջանաձեին: Վերջինս Սաակաշվիլու համախոհն էր նախկինում, բայց նրա դեմ էր դուրս եկել 2008-ին՝ հայտարարելով բացահայտորեն, որ պետք է համագործակցել Կրեմլի հետ: Նրա 10 տոկոս վաստակելու փաստը նաեւ կարող է Վրաստանում ռուսական ժողովրդականության ցուցանիշը հանդիսանալ:



Վրաստանի սահմանադրությունը փոփոխության ենթարկվեց, ձեւական դեր պարգեւելով նախագահին եւ թողնելով, որ զինված ուժերի ընդհանուր հրամանատարը լինի, մյուս կողմից՝ վստահելով ամբողջ գործադիր մարմնի իշխանությունը վարչապետին:

Նոր նախագահը անհայտ մեկն է, քաղաքական ասպարեզում քիչ փորձառությամբ: Բայց նա որպես ղեկավար համապատասխանում է Իվանիշվիլու պատկերացումներին: Միլիարդատերը երդվել էր վրացական քաղաքականությունից հանել իրենց «սուպերմեն» համարող ղեկավարներին:

ՆԱՏՕ-ի, ՓԵՅՍ-ի եւ Եվրոմիության դիտորդական առաքելությամբ Վրաստան ժամանած ներկայացուցիչները ընտրությունները գնահատել են թափանցիկ եւ արդար: Նրանք գտնում են, որ Վրաստանը գնում է դեպի եվրատլանտյան ոլրտ:

«Վրացական երազանք» կուսակցության առաջնորդները ծրագրում են վարել կշռադատված քաղաքականություն: Մինչ առաջ գնալով դեպի եվրոպական ինտեգրացում՝ նրանք փորձելու են իրենց դիրքերն ամրացնել Մոսկվայի հետ հարաբերություններում:

Հայաստանը պատանդ էր Մոսկվայի եւ Թբիլիսիի միջեւ առաջացած թշնամանքին: Վրաստանի արդեն նախկին նախագահի անբարյացակամ եւ ոխակալ վերաբերմունքի աստիճանը չափելու համար բավական է ծանոթանալ նրա՝ ջավախահայ ակտիվիստ Վահագն Չախալյանի հասցեին հնչեցրած խոսքերին (այս մասին տե՛ս «**Ազգի**» հոկտեմբերի 29-ի համարը), որոնցում նա գլուխ էր գովում, որ իրեն հաջողվեց դուրս վանել ռուսական զինվորական բազան հայերով բնակեցված նահանգից եւ վրացերեն լեզուն պարտադրեց երիտասարդ սերնդին, որպեսզի արագացնի ձուլումը:

Սաակաշվիլու քաղաքականությունը երկսայր էր: Երիտասարդ սերնդին ձուլման ենթարկելով՝ նա միաժամանակ տկարացնում էր նահանգի դիմադրողականությունը, քանի որ շատերը թողնում-հեռանում էին բնօրրանից, նվազեցնելով ինքնավարության ձգտումների իրականացումը տարածքում:

Ինչ վերաբերում է Իվանիշվիլուն, վրացահայերի նկատմամբ նրա արտահայտությունները բավականին հակասական են, բայց հայերի մեծամասնությունը քվեարկեց նրա թեկնածուի օգտին, գուցե ելնելով Սաակաշվիլու քաղաքականության հանդեպ ունեցած հակակրանքից: Նաեւ հավանաբար հույսեր փայփայելով, որ որոշ բարելավում տեղի կունենա նահանգի տնտեսության մեջ:

Եթե եւ երբ հարաբերությունները Թբիլիսիի եւ Մոսկվայի միջեւ կանոնակարգվեն, առեւտուրը եւ մարդկանց տեղաշարժը արտաքին աշխարհի մի կեսից մյուսը անհամեմատ հեշտանալու են:

Գալով բռնագրավված հայկական եկեղեցիների հարցին եւ հայերի հանդեպ լռելյայն խտրականության դրսեւորումներին՝ ապա երեւի ամենաճիշտ ճանապարհը համբերությամբ զինվելն է եւ բռնություններից զերծ մնալը:

Վրաստանում անցկացված նախագահական ընտրությունները խոստանում են դրական փոփոխություններ տարածաշրջանում: Հույսով լինենք, որ որոշ դիվիդենտներ բաժին կհասնեն նաեւ Հայաստանին:

**Դետրոյթ, ԱՄՆ**
**Թարգմ. Հ.Ծ**

***ՄԵՂՔԵՐԸ ՔԱՎԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿԸ***

# Տորոնտոյի քաղաքապետը ներողություն խնդրեց հարբեցողության համար

**Կանադայի Տորոնտո քաղաքի վարչակազմի ղեկավար Ռոբ Ֆորդը, որին հրաժարականի պահանջներ էին ներկայացվել թմրադեղերի ենթադրյալ առեւտրականի հետ կապերի եւ հրապարակային միջոցառումներում անվայել վարքագծի պատճառով, հանրությունից ներողություն է խնդրել հարբեցողության համար եւ խոստացել է փոխվել: Նա մեղայական հայտարարությամբ հանդես է եկել Newstalk 1010 քաղաքային ռադիոկայանի եթերում: Քաղաքապետի ելույթի ձայնագրությունը մատչելի է Google որոնողական համակարգում:**

**Ռոբ Ֆորդը ներողություն է խնդրել մասնավորապես այն բանի համար, որ հասարակությանը հարբած վիճակում էր ներկայացել 2013-ի օգոստոսին Տորոնտոյում կազմակերպված քաղաքային փառատոնում: Բացի դրանից, նա խոստովանել է, որ «վերահսկողությունից մի քիչ դուրս է եկել» Սուրբ Պատրիկի տոնի օրը, երբ, ըստ ԶԼՄ-ների հաղորդումների, նրան խմած վիճակում տեսել էին քաղաքային վարչակազմում: Այս կապակցությամբ Ֆորդը խոստացել է այսուհետեւ խմիչք օգտագործել տանը:**

**Քաղաքապետը նաեւ դիմել է Տորոնտոյի ոստիկանապետ Բիլ Բլերին՝ խնդրելով հրապարակել այն տեսագրությունը, որտեղ Ֆորդը իբր մարիխուանա է ծխում: Օրերս իրավապահ մարմինները հայտարարել էին, որ իրենք ստացել են այդ տեսագրությունը, սակայն չեն հրապարակի առանց դատարանի թույլտվության:**

**Քաղաքապետին վարկաբեկող տեսաերիզը կցվել է Ֆորդի մերձավոր ընկեր Ալեքսանդր Լիսիի գործին: Իշխանությունները վերջինիս մեղադրում են մի ամբողջ շարք հանցագործությունների, այդ թվում՝ թմրանյութեր պահելու եւ վաճառելու մեջ:**

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության դիվանագիտական դպրոցը (Հայաստանի դիվանագիտական դպրոց) հայտարարում է «Միջազգային հարաբերություններ եւ դիվանագիտություն» 2014թ.դասընթացի մասնակցության մրցույթ:

Ընդունելությանմրցույթին կարող են մասնակցել բարձրագույն կրթությունունեցող, մինչեւ 30 տարեկան ՀՀ քաղաքացիներ, ովքեր ստացել են ՀՀ կառավարության 2013թ.օգոստոսի1-ի N 811 -Ն որոշմամբ հաստատված «Դիվանագիտական ծառայության պաշտոնում նշանակվելու համար անհրաժեշտ մասնագիտությունների ցանկով»* սահմանված որակավորում:

Դասավանդման լեզուներն են հայերենը, անգլերենը եւռուսերենը: Նշված լեզուների գերազանց իմացությունը պարտադիր է: Դասընթացները վարում են ՀՀ ԱԳՆ բարձրաստիճան դիվանագետները եւ արտերկրի առաջատար բուհերից հրավիրված բարձրակարգ դասախոսներ:

Դասընթացը կմեկնարկի 2014թ.փետրվարին եւ կավարտվի 2014թ. դեկտեմբերին: Ուսումն անվճար է:

Պահանջվող փաստաթղթերի ցանկին կարելի է ծանոթանալ եւ դիմումի ձեւը բեռնելդիվանագիտական դպրոցի կայքից՝ **http://www.diplomaticacademy.am/hy/** կամ **http://www.diplomaticschool.am/hy/**հասցեներով:

Պահանջվող փաստաթղթերը ներկայացրած դիմորդները 2014թ. հունվարին կհրավիրվեն գրավոր քննության (միջազգային հարաբերությունների/արտաքին քաղաքականության վերաբերյալ թեմայով աշխատանք նշված երեք լեզուներով): Գրավոր քննությունը հաջողությամբ անցած դիմորդները կհրավիրվեն հարցազրույցի,որը կարող է անցկացվել վերոնշյալ երեք լեզուներով: Լավագույն 25 դիմորդները հնարավորություն կստանան մասնակցել դասընթացին:

Ուսումնական ծրագիրը կազմված է տեսական եւ գործնական առարկաներից: Դասավանդվող առարկաներից ունկնդիրները կհանձնեն ընթացիկ քննություններ, որոնց արդյունքները, ավարտական քննության, հաճախումներիեւ պրակտիկայի գնահատականների հետ, մաս կկազմեն հանրագումարային գնահատականի: Դասընթացը հաջողությամբ ավարտած ունկնդիրները կստանան ավարտական վկայական: Լավագույն շրջանավարտները, ՀՀ օրենքների պահանջներին համապատասխան, կարող են աշխատանքի ընդունվել ՀՀ ԱԳ նախարարությունում:

Դասընթացն անցկացվելու է Դիվանագիտական դպրոցում (Հանրապետության Հրապարակ, Կառավարության 2-րդ շենք): Դասերն անցկացվելու են ամեն աշխատանքային օր:

Փաստաթղթերի ընդունումը կատարվելու է ս.թ.նոյեմբերի 11-ից- մինչեւ դեկտեմբերի 27-ը ներառյալ, ՀՀ դիվանագիտական դպրոցում՝ Հանրապետության Հրապարակ, Կառավարության 2-րդ շենք, Երեւան 0010 հասցեով, յուրաքանչյուր աշխատանքային օր՝ ժ.10.00-13.00:

Լրացուցիչ տեղեկություններիանհրաժեշտության դեպքումդիմորդները կարող են դիմել ԱԳՆ դիվանագիտական դպրոց, 010583928 (ներքին՝ 221) հեռախոսահամարով կամ **h.israelian@mfa.am** եւ **h.israyelyan@diplomaticacademy.am** էլեկտրոնային հասցեներով:

* *«Դիվանագիտական ծառայության պաշտոնում նշանակվելու համար անհրաժեշտ մասնագիտությունների ցանկին»* եւ *«Ծառայողական պարտականությունների եւ լիազորությունների իրականացմանը խոչընդոտող հիվանդությունների ցանկին»* կարելի է ծանոթանալ դիվանագիտական դպրոցի կայքում:

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60, 060 271112

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 04 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան 4.11.2013, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Տիգրան Մեծ» հրատարակչութեան տպարանում՝ Արշակունեաց 2: